

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգն ինտեգրվել է կրթության եվրոպական տարածքին, որի արդյունքներն ամրագրվել են Բոլանիայի հռչակագրով և մի շարք այլ միջազգային նորմատիվ ակտերով: Այս գործընթացին ներգրավվել է նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը:

ԵՊՀ ԻՄ-ն իր ռազմավարությամբ հիմնավորում է մասնաճյուղի կողմից առաջարկվող և իրականացվող մասնագիտությունների ցանկը՝ նպաստելով հանրապետության հյուսիս-արևելյան տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը: Մասնաճյուղի գործունեության գերակա նպատակներից է հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական գիտությունների ու մշակույթի զարգացումը տարածաշրջանում, մասնաճյուղում բարձրորակ կրթության ապահովումը:

Իր առջև դրված խնդիրների իրականացման համար մասնաճյուղը վարում է կրթության որակի ապահովմանը միտված քաղաքականություն և նպատակ ունի մասնաճյուղում կրթությունն իրականացնել իր առաքելությանը համահունչ կրթական վերջնարդյունքներ ապահովող կրթական ծրագրերով, կարևորելով աշխատաշուկա մուտք գործող շրջանավարտների տեսական գիտելիքները և հատկապես գործնական հմտություններն ու կարողությունները, ուսումնառությունն իրականացնել ելքային արդյունքներ ապահովող դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդներով, առաջնորդվել ելքային արդյունքներին կողմնորոշված գնահատման մեթոդներով, ուսանողների համար պահպանել գնահատման օբյեկտիվ և թափանցիկ մեխանիզմներ: Եվ ամենակարևորը, իր կրթական ծրագրերով ուսանողներին դուրս բերել եվրոպական կրթական միջավայր՝ ապահովելով նրանց շարժունությունը:

Մասնաճյուղն իր կրթական ծրագրերի համար պարբերաբար իրականացնում է առաջավոր փորձի ուսումնասիրում և համեմատական վերլուծություն: Նա կարևորում է բենչմարքինգի դերը ողջ ուսումնական գործընթացի մշտադիտարկման գործում, շահագրգռված է և ունի բավարար պայմաններ ու նախադրյալներ արդյունավետ բենչմարքինգի իրականացման և փորձի փոխանակման համար և առաջնորդվում է կրթական ծրագրի համար առաջավոր փորձի ուսումնասիրման և համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման իր քաղաքականությամբ:

Մասնաճյուղը կրթության բոլոր մակարդակներում և աստիճաններում պլանավորում է.

- ուսումնառությունն իրականացնել բարձրորակ կադրերով, որոնք ունակ լինեն կրթության մշտական բարեփոխման պայմաններում ակտիվ նորարական գործունեության՝ պահպանելով կրթական բարձր չափանիշներ,
- ապահովել ուսանողակենտրոն ուսումնառություն,
- բավարարել արտաքին և ներքին շահակիցների ներկա և հեռանկարային պահանջմունքները,
- արդիականացնել ուսումնառության նյութական ռեսուրսները և այլն:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Վերլուծենք և հիմնավորենք, որ մասնաճյուղի մասնագիտությունների կրթական ծրագրերում (ՄԿԾ-ում) նշված ուսումնառության ակնկալվող արդյունքները համահունչ են հաստատության առաքելության հետ և համադրելի են պետական կրթական չափորոշիչների և Որակավորումների ազգային շրջանակի հետ:

Մասնաճյուղի 4 ֆակուլտետներում և հեռակա ուսուցման բաժնում մայն 2015-16 ուստարում իրականացվել են բակալավրի 15 կրթական ծրագրեր: Տարածաշրջանում գործունեության մի շարք տիրույթների համար, ինչպիսիք են հասարակական և բնական գիտությունները, կրթությունը և մանկավարժությունը, մշակույթը և արվեստը, մասնաճյուղն իր կրթական ծրագրերով ապահովում է համապատասխան որակավորում ունեցող, գիտելիքներով ու անհրաժեշտ կարողություններով օժտված, մասնագիտական խնդիրներ լուծող և համալիր կոմպետենցիաների տիրապետող մրցունակ մասնագետներով և:

- նպաստում հայագիտական և հումանիտար գիտությունների զարգացմանն ու կայացմանը,
- ծառայում մարզի սոցիալ-տնտեսագիտական միջավայրի ձևավորմանը, նրանց խնդիրների լուծմանն ու բարելավմանը,
- իրականացնում բնագիտական, բնապահպանական և կիրառական կարևոր նշանակություն ունեցող մի շարք գործընթացների համար կադրային ապահովում,
- ամենակարևորը և յուրահատուկը՝ «Կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերով մասնաճյուղը նպաստում է ազգային մշակույթի և արվեստի տարածմանն ու զարգացմանը ոչ միայն մարզում, այլ նաև ամբողջ հանրապետությունում:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը 1994 թվից անցել է բակալավրի որակավորումով, իսկ 2012թ.-ից նաև մագիստրոսի որակավորումով երկաստիճան կրթական համակարգին: Մինչև 2008թ.-ը ուսումնառությունն իրականացվել է ուսումնական պլանին համապատասխան, դասընթացների համար մասնաճյուղում մշակված ընդհանուր տեսքի առարկայական ծրագրերով: 2012-13 ուստարուց սկսած, ըստ մասնաճյուղի զարգացման 2011-15թթ. ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցի, մասնաճյուղը կատարել է կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերանայում՝ արդի ծրագրային չափանիշներին և տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկին համահունչ:

2012թ.-ի սեպտեմբերից մասնաճյուղում մեթոդ խորհրդի հսկողությամբ և Կրթության որակի ապահովման և գնահատման (2014թ. հունվարից՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման-ՄԿՈԱ) բաժնի անմիջական խոհրդատվություններով ֆակուլտետներում ստեղծվել են կրթական ծրագրի կառուցվածքային և բովանդակային վերանայման և մասնագիտության կրթական ծրագրի կազմման 13 աշխատանքային խմբեր (12-ը բակալավրի կրթական ծրագիր կազմելու և 1-ը՝ մագիստրոսի) հետևյալ մասնագիտությունների համար.

- Բնապահպանություն և բնօգտագործում
- Էկոլոգիական քիմիա
- Բնֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
- Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա

- Հայոց լեզու և գրականություն
- Մանկավարժություն և հոգեբանություն
- Պատմություն
- Օտար լեզու և գրականություն (Անգլերեն)
- Օտար լեզու և գրականություն (Ֆրանսերեն)
- Տնտեսագիտության տեսություն
- Սերվիս
- Կիրառական արվեստ (բակալավրի)
- Կիրառական արվեստ (մագիստրոսական)

Այդ խմբերն ըստ ՄԿՈԱ բաժնի կողմից մշակված ժամանակացույցի պարբերաբար աշխատել են բաժնի մասնագետների և ուսումնամեթոդական վարչության ներկայացուցիչների հետ, ուսումնասիրել են Ռուսաստանի Դաշնության պետական չափորոշիչները և այլ առաջատար բուհերի կրթական ծրագրերը: Ուսումնասիրությունների և ԵՊՀ հապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերի հիման վրա կազմվել և ներդրվել են կրթության ժամանակակից պահանջներին, որակավորումների ազգային շրջանակի հետ համադրելի և Բոլոնիայի գործընթացի դրույթներին համապատասխան կոմպետենցիաներով ձևակերպված կրթական ծրագրեր:

2013-14 ուսումնական տարում իրականացվող բոլոր մասնագիտությունների համար 2013թ. սեպտեմբերից մասնաճյուղի համապատասխան մասնագիտությունների ուսումնառությունը կազմակերպվել է նոր կրթական ծրագրերով, նրանք տեղադրված են մասնաճյուղի կայքում, և ուղեցույց են ծառայում դասախոսների և ուսանողների համար: 2013թ-ից հետո բացված 3 մասնագիտությունների համար՝ «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Դիզայն», «Հոգեբանություն» նույնպես համապատասխան գործընթացների հիման վրա կազմվել և ներդրվել են կրթական ծրագրեր:

Մասնաճյուղի գործող կրթական ծրագրերը կազմելիս համապատասխան աշխատանքային խմբերն առաջնորդվել են ԵՊՀ ԳԽ-ի կողմից 2010թ. հաստատված կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներով և կրթական ծրագրի մասնագրի հաստատված կառուցվածքով (տես որևէ կրթական ծրագիր): Հետևելով մասնագրի կառուցվածքի վրա դրված պահանջներին, կրթական ծրագրերը կազմվել են՝ ապահովելով մասնաճյուղի առաքելության հիմնական տարրերի առկայությունը: Յուրաքանչյուր կրթական ծրագրում հստակ նշված են.

1. ծրագրի շրջանավարտների գործունեության մասնագիտական ոլորտները, օրինակ՝ բիզնես, կոմերցիա, ֆինանսներ, կառավարում, կրթություն-մանկավարժություն, լրատվություն, մշակույթ, ժողովրդական արհեստներ, հնագիտություն, արվեստաբանություն և այլն, **գործունեության տիրույթները**, օրինակ՝ տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկություններ, առևտրային բանկեր, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, գիտահետազոտական ինստիտուտներ, կրթական-մանկավարժական հաստատություններ, լրատվական կազմակերպություններ, մշակույթի բաժիններ, պատկերասրահներ, թանգարաններ, գեղագիտական կենտրոններ և այլն, **նրանց կողմից զբաղեցվող պաշտոնները**, որոնց համախումբը գրեթե ծածկում է տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկը, օրինակ՝ խորհրդատվական ընկերություններում վիճակագրական տվյալների վերլուծաբան, փորձագետ, ֆինանսական խորհրդատու, տնտեսագետ, հաշվապահ, մենեջեր, վարկային մասնագետ, արդյունքների վիճակագրական վերլուծությունների մասնագետ, կրթական-մանկավարժական հաստատություններում ուսուցիչ, լրատվական կազմակերպություններում լրագրող, թղթակից,

խմբագիր, սրբագրիչ, հաղորդավար, մշակույթի բաժիններում, պատկերասրահներում, թանգարաններում, գեղագիտական կենտրոններում մասնագետներ, մշակութային, միջոցառումների կազմակերպիչներ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավարներ և այլն: Ծրագրի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել ԵՊՀ համապատասխան ֆակուլտետների մագիստրատուրայում:

2. շնորհվող որակավորումները՝ բակալավր կամ մագիստրոս, և ծրագրի ավարտին ձեռք բերվող կրթական վերջնադրույունները, օրինակ՝ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներն ու գիտելիքները բիզնեսի և տնտեսության պետական կարգավորման ոլորտներում կիրառելու հմտություններ, կազմակերպության կառավարմանն առնչվող տնտեսագիտական տվյալների և տեղեկատվության գնահատման, մեկնաբանման և սինթեզման կարողություններ, տվյալների վերլուծության քանակական մեթոդների հիմնարար իմացություն, բանասիրական ուսումնասիրություններ, խմբագրական աշխատանքներ կատարելուց, դասավանդելուց տեսական և կիրառական լեզվաբանության և գրականագիտության գիտելիքները համադրելու հմտություններ, գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր, մանկավարժական աշխատանք իրականացնելիս միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում կիրառելու կարողություններ, կիրառական արվեստի, գեղարվեստական նախագծման, կատարման տեխնիկայի ժամանակակից մեթոդների միավորմամբ դեկորատիվ-կիրառական արվեստի և ժողովրդական արհեստների հետ կապված ստեղծագործական աշխատանք իրականացնելու հմտություններ, գիտահետազոտական, մանկավարժական և ուսումնական հաստատություններում աշխատելու և մեթոդական, սոցիալական-մանկավարժական, մշակութային-լուսավորական աշխատանքներ կատարելու հմտություններ, մշակութային ծրագրեր կազմակերպելու և ղեկավարելու կարողություններ, մասնագիտական խնդիրներ առաջադրելու և լուծելու կարողություններ:

3. դասավանդման և ուսումնառության մոտեցումները, որոնք ուսանողակենտրոն են, միտված են ներքին և արտաքին շահակիցների հեռանկարային պահանջունքների բավարարմանը, իսկ դասավանդման և ուսումնառության գործընթացի լիարժեք ապահովման համար առկա են և կիրառվում են.

- մասնագիտության դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ),
- ճկուն ուսումնական պլաններ,
- տեղեկատվական բազմազան տեխնոլոգիաներ,
- ազգային և միջազգային լավագույն փորձ,
- ժամանակակից սարքավորումներով և ծրագրային միջոցներով ապահովված համակարգչային լսարաններ,
 - ինտերնետային կապով համակարգչային սրահներ,
 - հեռաուսուցմամբ և առցանց դասախոսությունների իրականացման միջոցներով ապահովված լսարան (on-line լսարան),
 - գրականության էլեկտրոնային ռեսուրսներ և այլն:

Իսկ «Կիրառական արվեստ» մասնագիտության համար առկա են ռեկվեզիտներով, գիպսե արձանիկներով, դիմակներով, դեկորատիվ մրգերով և բանջարեղենով համալրված, ծրագրային և տեխնիկական միջոցներով ապահովված արվեստանոցներ, հատուկ կահավորված լսարաններ:

Կրթական ծրագրերը ներառում են նաև ծրագրի ուսումնական մոդուլների նկարագրիչները, որոնք տալիս են յուրաքանչյուր դասընթացի նպատակը կրթական ծրագրի

իրականացման շրջանակներում, և դասընթացի ավարտին ուսանողի կողմից ձեռք բերվող կրթական արդյունքները՝ Եվ ամենակարևորը՝ այն ներառում է ըստ դասընթացների կրթական վերջնարդյունքների ձևավորման քարտեզը, որն ականառու կերպով ցույց է տալիս, թե ինչպես է դասընթացների միջոցով իրականացվում ծրագրից ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը և ինչպես են վերջիններս շաղկապված ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող դասընթացների հետ:

Այսպիսով, կրթական ծրագրերում այս բաժինների և նաև մնացած բաժինների առկայությունն ապահովում է նրանցում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ:

Մասնաճյուղը տարածաշրջանի գործատուների շրջանում հացումների միջոցով հավաքագրելով տվյալներ նոր մասնագիտությունների պահանջարկի վերաբերյալ և գնահատելով կոնկրետ մասնագիտության իրականացման իր հնարավորություններն ու որակավորումների հետ կապված պետական որոշումները յուրաքանչյուր ընթացիկ ուստարում պլանավորում և հաստատում է հաջորդ ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկը:

Վերջին 5 տարիներին արտաքին շահակիցների շրջանում անցկացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարածաշրջանում մեծ պահանջարկ կա սոցիալական աշխատողի, հատուկ մանկավարժի ու հոգեբանի, տարրական դասարանների ուսուցչի, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչի և այլն (*Աղյուսակ 1*):

Մասնաճյուղն ավարտել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Համակարգչային գրաֆիկա» նոր մասնագիտությունների համար կրթական ծրագրերի կազմման աշխատանքները:

Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ-ի) հետ կրթական ծրագրերի ուսումնառության արդյունքների համադրելիությունն ապահովվել է կրթական ծրագրերը կազմելուց: Կրթական ծրագրեր կազմող աշխատանքային խմբերը բակալավրի և մագիստրոսի կրթական մակարդակին համապատասխան անհրաժեշտ գիտելիքները, հմտությունները և կարողությունները ձևավորող կոմպետենցիաները՝ ուսումնառության **ակնկալվող վերջնարդյունքները**, ձևակերպելուց հիմք են ընդունել ***Որակավորումների ազգային շրջանակի*** պահանջները և կրթական ծրագրից մասնաճյուղի ակնկալիքները: Հետևաբար, ՈԱՇ-ում ներկայացված մասնագիտական, տեսական և գործնական խորը գիտելիքների ձևավորման հնարավորությունները, վարպետության և նորարարության մասին վկայող վերջնարդյունքները, ուսանողի ձեռք բերվելիք կարողությունները մասնաճյուղի կրթական ծրագրերում ամրագրված են համապատասխան կոմպետենսություններում, որոնք ավելի մանրամասն ներկայացված են յուրաքանչյուր դասընթացի **փաթեթում** (պորտֆոլիոյում): Ամրագրված կրթական վերջնարդյունքները ծրագրի ավարտին.

1. շրջանավարտների մոտ կձևավորվեն ՈԱՇ-ի պահանջներին համապատասխան գիտելիքներ, որոնք ընդգրկում են կոնկրետ մասնագիտության հիմնական հասկացությունների, գաղափարների, սկզբունքների, վերլուծական և քննադատական մեթոդների ու մոդելների իմացությունը,
2. շրջանավարտները կունենան իրենց մասնագիտության համար կարևոր տվյալներ, ցուցանիշներ և տեղեկատվություն հավաքագրելու, խմբագրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համադրումներ կատարելու, ինքնուրույն խնդիրներ և հարցադրումներ

կատարելու և լուծելու, ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու, հետազոտական աշխատանքներ կատարելու, մասնագիտական ոլորտում ժամանակակից տեղեկատվական համապատասխան համակարգեր նպատակային կիրառելու հմտություններ,

3. շրջանավարտները կունենան մասնագիտական գրագետ, փաստարկված, հիմնավորված, տրամաբանական բանավոր և գրավոր խոսք, հաղորդակցման, թիմում աշխատելու և իր մասնագիտական գիտելիքները կիրառելու, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, մասնագիտական որոշումների դեպքում պատասխանատվություն ստանձնելու կարողություններ:

Որակավորումների ազգային շրջանակի հետ մասնաճյուղի մասնագիտությունների կրթական ծրագրերի համադրելիությունը ներկայացնենք «Տնտեսագիտության տեսություն», «Հայոց լեզու և գրականություն», «Կիրառական արվեստ» մասնագիտությունների կրթական ծրագրերի օրինակով (***Հավելված 3.1.1***):

Ներկայացնենք այն կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների ցանկը, որոնց օրինակով կրթական ծրագրեր կազմող աշխատանքային խմբերը կատարել են մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ):

Կրթական ծրագրերի ներդրման և նրանց հետագա բարեհաջող կայացման համար ֆակուլտետներում կազմված աշխատանքային խմբերը հիմք ընդունելով ներկայիս կրթական ոլորտում իրականացվող բարեփոխումները, բացի ԵՊՀ համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերից, իրականացրել են ազգային հեղինակավոր բուհերի, ռուսաստանյան և երբեմն նաև եվրոպական առաջատար բուհերի ու միջազգային կառույցների (ՀՊՄՀ-ի, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի(ՄՊՄՀ), Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի և նրա Սևաստոպոլի և Վոլգոգրադի մասնաճյուղերի և այլն) համապատասխան կրթական ծրագրերի հետ առաջավոր փորձի ուսումնասիրություններ և համեմատական վերլուծություններ (***Հավելված 3.1.2***):

Կրթական ծրագրերը կազմելուց և նաև հետո մասնագիտական աշխատանքային խմբերը մասնաճյուղի և նշված բուհերի կրթական ծրագրերի միջև իրականացրել են մի շարք համեմատական վերլուծություններ: Դրանց նպատակն այլ բուհերի կրթական ծրագրերի առանձնահատկությունների ուսումնասիրությունն էր փորձարկված ու լավ ձեռքբերումները ֆիքսելու, կիրառելու և ունեցածի հետ համեմատելու համար:

Մասնավորապես, ուսումնասիրվել և համեմատվել են մասնաճյուղի և այլ բուհերի.

- կրթական ծրագրերի կառուցվածքները,
- ծրագրերում կրթամասերի միջև կրեդիտների բաշխվածությունը,
- ծրագրի նպատակներն ու խնդիրները,
- ծրագրի ավարտին ձևավորվող կոմպետենցիաները,
- շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները,
- առարկայացանկը և այլն:

Կատարվել են համապատասխան համեմատական վերլուծություններ, որոնք հիմք են հանդիսացել հետագայում կրթական ծրագրերի վերանայման համար:

Օրինակ, մասնաճյուղի կրթական ծրագրերն իրենց կառուցվածքով ամբողջությամբ համադրելի են ԵՊՀ համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ,

հետևաբար կրթական ծրագրերի կառուցվածքի համեմատական վերլուծության համար դիտարկվել են Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ), Լոնդոնի Middlesex-ի համալսարանի կրթական ծրագրերի և ՌԴ պետական չափորոշիչների (պ/չ) կադապարները **(Հավելված 3.1.3)**: Ներկայացված կառուցվածքային համեմատությունը թույլ է տալիս ասել, որ մասնաճյուղի մասնագիտությունների կրթական ծրագրերի վրա դրվող պահանջները համահունչ են եվրոպական չափորոշիչների պահանջներին և նրանցում առանձնահատուկ տեղ է հատկացված ձեռք բերվող կոմպետենցիաների տերմիններով ձևակերպված **կրթական վերջնարդյունքներին**, նաև **դասընթացների/մոդուլների նկարագրիչներին**, որոնք յուրաքանչյուր դասընթացի/մոդուլի համար պարունակում են կրթական վերջնարդյունքները, ուսումնական ծանրաբեռնվածությունը, դասընթացի հակիրճ նկարագիրը և նպատակները, գնահատման մեթոդները, դասընթացներից ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևավորման քարտեզը՝ աղյուսակի տեսքով, որը ավելի պատկերավոր է ներկայացնում կրթական վերջնարդյունքների ձևավորման ուղին և բացահայտում նպատակները:

ՌԴ պ/չ-ում և ՀՊՄՀ-ի կրթական ծրագրի կառուցվածքում հարկ է կարևորել բակալավրի հիմնական կրթական ծրագրի իրականացման պայմանների վրա դրվող պահանջները և հիմնական կրթական ծրագրի յուրացման որակի գնահատման չափանիշները: ԵՊՀ ԻՄ-ում այս երկու խնդիրները լուծվում են դասընթացների շրջանակներում, որոնք մանրամասն ներկայացված են յուրաքանչյուր դասընթացի փաթեթում:

Մասնաճյուղի կրթական ծրագրում ներառված չեն ծրագրի յուրացման որակի գնահատման չափանիշներ կամ ցուցիչներ, այն գնահատվում է մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի, դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների կարծիքի, ուսումնառությունից շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրման միջոցով:

Մասնաճյուղի կրթական ծրագրերում նշված չեն ծրագրի խնդիրները և առարկան, որը բավականին մանրամասն ներկայացված է ՌԴ տվյալ մասնագիտության պետական չափորոշիչներում, իսկ նպատակներն առանձնացված են ըստ գործունեության ոլորտների **(Հավելված 3.1.5)**:

Մոդուլային կառուցվածքով և մոդուլներում կրեդիտների բաշխվածությամբ **(Հավելված 3.1.4)** կրթական ծրագրերը գրեթե չեն տարբերվում: Օրինակ, «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության ծրագրի վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ մաթեմատիկական դասընթացները ներառված են «Ընդհանուր մասնագիտական» կրթամասում, իսկ ՌԴ պետական չափորոշիչներով՝ «Մաթեմատիկական և բնագիտական ցիկլեր» կրթամասի մեջ:

Շրջանավարտների ապագա կարիերայի առումով գրեթե բոլոր համապատասխան կրթական ծրագրերի համար մասնագիտական գործունեության տիրույթները համապատասխան են **(Հավելված 3.1.6)**:

Այժմ մասնաճյուղի բոլոր մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրերն ապահովում են ծրագրի մասնագրով պահանջվող ամբողջ փաստաթղթային փաթեթը, պահպանում են նրանց բովանդակային բոլոր պահանջներն ու չափանիշները:

ՀԱՓՈԴՈՇԻՉ Բ. ՄՈՆԶ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Վերլուծենք մասնաճյուղի մասնագիտությունների կրթական ծրագրերում (ՄԿԾ-ում) նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր ռազմավարական ծրագրում առաջնային տեղ է հատկացնում բարձրորակ կրթությանը և հավատարիմ իր առաքելությանը և տարածաշրջանում իր նպատակային գործունեությանը՝ իրականացնում է բարձրորակ կրթություն ապահովելուն միտված համապատասխան գործընթացներ: Այդ նպատակի իրականացման հիմքում ընկած է որակյալ մասնագիտական կրթական ծրագրերով առաջնորդվելու գաղափարը, որի կարևորագույն մասն են կազմում ուսումնառության ելքային արդյունքներ ապահովող դասավանդման և ուսումնառության մեթոդները: Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման գործընթացը կազմում է մասնաճյուղի ռազմավարական պլանավորման կարևոր խնդիրներից մեկը:

Մասնաճյուղի կրթական ծրագրերում դասավանդման և ուսումնառության մեթոդներն ընտրվում են կրթական ծրագրի կազմման ժամանակ, ներառված են ծրագրի կառուցվածքի մեջ և ամրագրվում են կրթական վերջնարդյունքներին: Այսինքն, թվարկված են դասավանդման և ուսումնառության այն մեթոդները, որոնց միջոցով ծրագրի ավարտին ուսանողը ձեռք կբերի մասնագիտական գիտելիք և իմացություն, գործնական մասնագիտական և ընդհանրական կարողություններ (**տես որևէ կրթական ծրագիր**):

Դասավանդման և ուսումնառության մեթոդները դասախոսի և ուսանողների փոխկապակցված համատեղ գործունեության ձևեր են և մասնաճյուղի կրթական ծրագրերում ընտրված են խոսքային, գննական, գործնական, տրամաբանական, ճանաչողական-ստեղծագործական, հետաքրքրությունների խթանման, ինտերակտիվ-կառուցողական, համագործակցային ուսուցման, քննադատական մտածողության, խմբային ու ինքնուրույն աշխատանքի խթանման բազմազան մեթոդներ:

Թեպետ մասնաճյուղն առայժմ չունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության գործող քաղաքականություն (նրա մշակումն ընթացքի մեջ է), սակայն իր կրթական ծրագրերով ապահովում է դրանց ընտրության այնպիսի մոտեցումներ, որոնք միտված են ուսումնառության վերջնարդյունքների ձևավորմանը: Կրթական ծրագրեր կազմող աշխատանքային խմբերը մեթոդների ընտրության ժամանակ հաշվի են առել «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներում» տրված դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները, դասական մեթոդների փորձը, ուսումնասիրել են մասնաճյուղում և այլ առաջատար բուհերում կիրառվող փորձված ժամանակակից մեթոդները: Կրթական ծրագրերի համար նրանք ընտրել են բարեփոխումներին համահունչ, տեղեկատվական լայն միջոցների ներառմամբ, ժամանակակից ուսանողների պահանջների բավարարմանն ուղղորդված դասավանդման և ուսումնառության մեթոդներ: Խմբերում կատարել են նաև այդ մեթոդների համադրում և վերլուծություն այլ առաջատար բուհերում կիրառվող մեթոդների հետ (**Հավելված 3.2.1**):

Օրինակ, մասնաճյուղի «Տնտեսագիտության տեսություն», Սանկ-Պետերբուրգի «ENGECON» համալսարանի «Экономика», Լոնդոնի Middlesex University «Business Economics» մասնագիտությունների կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունն ըստ ձևավորվող կոմպետենցիաներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների

ընտրության ցույց է տալիս, որ քննարկվող ՄԿԾ-ներն ընդգրկում են կրթական վերջնարդյունքների ձևավորմանը նպաստող դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդների նախնական հաստատված ցանկ: Դասավանդման և ուսումնառության մեթոդների ավելի նպատակային և ընդգրկուն ցանկը ներկայացվում է մասնագիտության համապատասխան դասընթացների/մոդուլների ծրագրերում:

Մասնաճյուղի կրթական ծրագրերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՄԿԾ-ներում որպես դասավանդման և ուսումնառության մեթոդներ ներկայացված են դասական ձևերից՝ դասախոսություններ, գործնական և սեմինար պարապմունքներ, լաբորատոր աշխատանքներ, որոնք գրեթե բոլորն իրենց մեջ ներառում են նյութի մատուցման համակարգչային ներկայացումների մեխանիզմը, գիտելիքի ամրագրման համար՝ ինքնուրույն աշխատանքներ, անհատական առաջադրանքներ, ռեֆերատներ, էսսեներ, ստեղծագործական մտքի զարգացման համար՝ պրակտիկաներ, կուրսային աշխատանքներ, գիտական զեկուցումներ և խմբային քննարկումներ, կառուցողական և համագործակցային կարողությունների զարգացման համար՝ ճանաչողական խաղեր, բանավեճ, դերային խաղ, խմբային աշխատանքներ, փաստաթղթերի հետ աշխատանք և այլն: Այդ մեթոդները միտված են **«ուսանողակենտրոն»** կրթական մշակույթ ձևավորելուն:



Մասնավորապես, ԵՊՀ ԻՄ-ում 2014թ-ից ուսումնառության արդյունքներին համապատասխան ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդներն ավելի մանրամասն, ընդգրկուն, նաև ըստ յուրաքանչյուր թեմայի, ներկայացվում են կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող դասընթացների փաթեթներում (պորտֆոլիո): Փաթեթներում ներկայացվում են դասախոսի կողմից դասի վարման ռազմավարությունը և մարտավարությունը, ապա յուրաքանչյուր թեմայի և արդյունքում ամբողջ դասընթացի յուրացումն ու անհրաժեշտ կոմպետենցիաների ձևավորումն ապահովող դասավանդման և ուսումնառության մեթոդները: Փաթեթների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բոլոր դասախոսները կիրառում են անհատական-կողմնորոշված, ինտերակտիվ և թիմային աշխատանքի վրա հիմնված, իրական օրինակների, թեմատիկ շնորհանդեսների, գործնական պարապմունքների, անհատական և խմբային առաջադրանքների և նրանց քննարկումների ու վերլուծությունների միջոցով թեմաների հեշտ յուրացումն ապահովող դասավանդման և ուսումնառության մեթոդներ:

Փաթեթում հավաքագրելով դասընթացի ընթացքում ուսանողների բոլոր ձեռքբերումների տվյալները, դասախոսը հնարավորություն ունի գնահատելու դասընթացից իր ձեռքբերումները, ընտրած դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը, կատարել դրանց վերլուծություն և անհրաժեշտության դեպքում վերանայել թե դասընթացի, և թե համապատասխան կրթական ծրագրի իրականացման համար ընտրված մեթոդները:

Մասնաճյուղում գործում են դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության ուղղակի և անուղղակի գնահատման մի շարք մեխանիզմներ: Դրանցից են.


1. 2010թ.-ից իրականացվող դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումները: Այդ հարցումների վերջին 5 տարիների արդյունքների մշակումները ցույց են տվել, որ ուսանողները բարձր են գնահատում դասախոսների կողմից նյութի մատուցման հասկանալի և մատչելի մեթոդների կիրառումը (4.45-4.69), նյութի յուզմանը օժանդակելու և ինքնուրույն աշխատանքների միջոցով ամրապնդելու դասախոսների ջանքերը (4.4-4.7), ուսանողների վերլուծական և քննադատական

մտածողությունը զարգացնելու միտումները (4.59): Հարկ է նշել, որ վերջին 5 ուստարիների համար միջին գնահատականն էապես բարելավվել է (4.4-ից՝ 4.7):




«Խթանում էր ուսանողների վերլուծական և քննադատական մտածողությունը» հարցը հարցաթերթում ընդգրկվել է 2014-15 ուստարում և ուսանողների կողմից տրված միջին գնահատականը եղել է 4.59:



2. 2011թ.-ից անցկացվող մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ ամենամյա հարցումները: Եթե շրջանավարտները բավարարված են ուսումնառությունից, ուրեմն կիրառվող մեթոդները եղել են նպատակային, ուսանողի ձեռքբերումներին ուղղորդված, հետևաբար արդյունավետ: Այդ հարցումների արդյունքների ամփոփումը երեք ուստարիների համար վկայում է, որ մեր շրջանավարտները բավարարված են իրենց ստացած տեսական գիտելիքներից (միջին գնահատականը՝ 4.44-4.54), ձեռք բերած մասնագիտական կարողություններից՝ (միջին գնահատականը՝ 4.40-4.46), սակայն այնքան էլ բավարարված չեն իրենց ձեռքբերած գործնական հմտություններից (միջին գնահատականը՝ 4.20-4.33):




3. 2012-13 ուստարվանից իրականացվող մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցումը: Այդ հարցման արդյունքներն այնքան էլ գոհացուցիչ չեն, թեպետ ըստ տարիների (2013-2015թթ.) նկատվում է բարելավման միտում. մասնագիտական պատրաստվածությունը՝ 3.38-4.11, տեսական գիտելիքների իմացությունը՝ 3.88-4.14, իսկ գործնական հմտությունները ցավոք՝ 3.31-3.78, այս արդյունքները փաստում են ուսումնառության գործընթացում առկա թերացումների կամ այդ գործընթացի ոչ արդյունավետ իրականացման մասին:



4. 2012-13 ուստարվանից իրականացվող մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցումը: Հարցման մասնակիցները մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների տեսական գիտելիքների իմացությունը, գործնական հմտությունները, ստեղծագործական ունակությունները, դասավանդման ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունները, մասնագիտական խոսքը հիմնականում գնահատել են 5 և 4 բարձր գնահատականներով (բոլոր առաջարկված հարցերի միջին գնահատականը 2015-16 ուստարում կազմել է 4.6-4.8, որը բավականին լավ ցուցանիշ է, իսկ վերջին չորս ուստարիների արդյունքները բավականին բարելավվել են (3.52-4.81), ինչը վկայում է դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման և նրանց արդյունավետության բարձրացման մասին):



Արտաքին շահակիցները մեր պրակտիկանտների դասավանդման ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունները 2015-16 ուստարում գնահատել են միջինը 4.5 միավորով, իսկ դասավանդման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաները հաջողությամբ կիրառելու կարողությունները՝ միջինը 4.85 միավորով:



Հաշվի առնելով այն փաստը, որ թե ուսանողներն իրենք, և թե արտաքին շահակիցները հիմնականում բավարարված չեն նրանց գործնական հմտություններից և կարողություններից, մասնաճյուղը պարբերաբար նոր ուղիներ է փնտրում այն բարելավելու ուղղությամբ: Աշխատանքային փորձի ձևավորման ու տիրապետման նպատակով մասնաճյուղն ուսանողների համար ուսումնառությանը զուգահեռ կազմակերպում է տարբեր պրակտիկաներ, դասընթացներ, սեմինարներ, ճանաչողական այցեր:

Օրինակ.

- Տնտեսագիտության ֆակուլտետի բարձր կուրսերի ուսանողներն իրենց պրակտիկան անց են կացնում համրապետության մի շարք առաջատար հաստատություններում (Արդշինբանկ, Կոնվերս, Արարատ և այլ բանկեր ու վարկային կազմակերպություններ, մարզի տարածքում գործող սոցիալ-մշակութային, հյուրանոց-ռեստորանային կազմակերպություններ և այլն), իսկ 2015թ.-ին «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության լավագույն ուսանողները, մրցութային կարգով, իրենց արտադրական պրակտիկաներն անց են կացրել ՀՀ Կենտրոնական բանկի Դիլիջանի մասնաճյուղում, հեռահաղորդակցության օպերատորներ «ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՄ» և «Օրանժ» ընկերություններում:
- «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողներն ակտիվ պրակտիկան անցնում են մարզի տարբեր հաստատություններում, այդ թվում SOS մանկական գյուղեր ծրագրի Իջևանի կենտրոնում, մարզի հիմնական և ավագ դպրոցներում:
- Հումանիտար գիտությունների ֆակուլտետում ուսանողների կարիերային նպաստող քայլերից է օտարալեզու հյուրերի հետ հանդիպումների ժամանակ ուսանողների ներգրավումը որպես թարգմանիչներ:
- 2015թ. ից Տնտեսագիտության ֆակուլտետը ուսանողների պրակտիկ կարողությունների, հմտությունների զարգացման, միջազգային փորձ ունեցող մասնագետների հետ շփման նպատակով համագործակցում է «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ: Համագործակցության շրջանակներում «Մերվիս» մասնագիտության ուսանողները մասնակցում են սեմինարների, պրակտիկ աշխատանքների: Տնտեսագիտության ֆակուլտետի 8 ուսանողներ 2015թ. մայիսի 2-ին և 3-ին մասնակցել են «Էկոտուրիզմի կազմակերպման և կայուն զարգացման հիմնահարցերը» խորագրով ամառային դպրոցին:

- «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողները պարբերաբար մասնակցել են սոցիալական մանկավարժի միջազգային օրվան նվիրված միջոցառումների, վիկտորինաների, համատեղ քննակումների (02.10.2013թ., 02.10.2014թ.), որը նպաստել է նրանց մասնագիտական հմտությունների զարգացմանը, այլ բուհերի ուսանողների հետ համագործակցությանը, փորձի փոխանակմանը:
- Բնական գիտությունների ֆակուլտետի և «Մոբայլ Ծրագրավորման Կենտրոն Իջևան» նախագծի համագործակցության շնորհիվ ուսանողները և շրջանավարտները 2013թ.-ից մասնակցում են ծրագրավորման դասընթացների, նրանցից 4-ն արդեն աշխատում է նորաստեղծ «Վեկտոր» ՓԲԸ-ում, իսկ 15-ը հաճախում են դասընթացներին:
- 2013թ. Կիրառական արվեստի ֆակուլտետի և Տավուշի թեմի առաջնորդարանի համագործակցությամբ 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների ու շրջանավարտների համար կազմակերպվել է սրբանկարչության դասեր: 2013-14 ուստարում ֆակուլտետի ուսանողների համար իրականացվել են ավանդական գորելենագործության վարպետության դասեր՝ Մոսկվայից հրավիրված ՀՀ ժող. վարպետ Յու.Ս.Հովսեփյանի կողմից: Կիրառական արվեստի ֆակուլտետում ուսանողների կարիերային նպաստում է նաև նրանց մասնակցությունը կազմակերպվող ցուցահանդեսներին:
- 2013թ. մասնաճյուղի մեկ տասնյակից ավելի ուսանողներ, շրջանավարտներ և դասախոսներ մասնակցել են «Նոր մեղիա դպրոցի» քառամսյա դասընթացին: Նրանք ծանոթացել են նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններին և պրակտիկ կիրառությանը: Ծրագրի ընթացքում մասնակիցները ձեռք են բերել քաղաքացիական լրագրության ոլորտի հմտություններ, հրապարակել են համայնքի խնդիրներին վերաբերող հոդվածներ:

5. մասնաճյուղում պարբերաբար իրականացվող բաց և ցուցադրական դասերը, պլանավորված և չպլանավորված դասալսումները, փոխադարձ դասալսումները: Դրանք նպաստում են դասախոսների մանկավարժական վարպետության աճին, դասախոսներին տրամադրում են անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական օգնություն, ապահովում կրթական վերջնարդյունքներին դասավանդման մեթոդների համապատասխանությունը, տարածում դասավանդման լավագույն փորձը, բարձրացնում ուսանող-դասախոս համագործակցության մակարդակը, նպաստում ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը: Ուսումնասիրելով և վերլուծելով մասնաճյուղի դասախոսների կողմից կիրառվող դասավանդման մեթոդները և դասընթացների վարման բովանդակային և նյութա-տեխնիկական ապահովվածության վիճակը, գնահատվում և վեր են հանվում դասավանդողների մասնագիտական և մեթոդական կարիքները, կազմվում են անհրաժեշտ վերապատրաստումների թեմաները, օգնում են դասավանդողների միջև մասնագիտական և մեթոդական փորձի փոխանակմանը, դասավանդման լավագույն փորձի տարածմանը:

Ամբիոններում պարբերաբար անց են կացվում դասալսումներ: 2014-15 ուստարվանից ամբիոններում դասալսումներն իրականացվում են ըստ հաստատված կարգի, դասալսողները գնահատում են և արդյունքների վերլուծություններն իրականացնում են ըստ հատուկ մշակված հարցաթերթի և ձևաթերթի: Գնահատվում են դասի վարման մեթոդիկան, ամրապնդման հնարների կիրառումը, ուսանողների մասնակցության ղեկավարումը, կարգապահության պահպանման հնարների կիրառումը: Դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերում, ներկայացվում են դասի վարման լավագույն օրինակները, կատարվում են դասավանդման որակի արդյունավետության բարձրացման, նոր ժամանակակից մեթոդների կիրառման առաջարկներ և այլն: Լավագույն մեթոդները դասընթացների միջոցով

ներկայացվում են մասնաճյուղի ողջ դասախոսական անձնակազմին, մասնավորապես երիտասարդ դասախոսներին 2014թ.-ին ստեղծված «Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման» կենտրոնի միջոցով:

Հարցումների և դասալսումների տվյալներն ամփոփվում են, վերլուծվում և քննարկվում ամբիոններում: Դրանք լուսաբանվում են կայքում: Այդ արդյունքների հիման վրա իրականացվում է ստորաբաժանման հետագա գործունեության պլանավորում, կազմակերպվում են լավագույն փորձի փոխանակմանը միտված դասալսումներ, վերապատրաստումներ, խրախուսվում են լավ ձեռքբերումները:

Դասալսումների արդյունքների վերլուծությունները վկայում են, որ մասնաճյուղի դասախոսների մոտ ձևավորված է դասընթացի արդյունավետ պլանավորման, ուսանողների հետ սերտ աշխատելու, տեխնիկական միջոցներով և բաշխիչ նյութերով աշխատելու մշակույթ, նկատելի է, որ մեթոդական վերապատրաստումներ անցած դասախոսները բավականին լավ տիրապետում են դասի արդյունավետ վարման ժամանակակից մեթոդներին: Դասավանդման արդյունավետությանը խոչընդոտող հիմնական թերություններ են ավանդական դասախոսությունները, թույլ համագործակցությունը միևնույն առարկայի դասախոսություն և գործնական դասավանդող դասախոսների միջև, քիչ են կիրառվում ուսանողների ճանաչողական գործունեության ակտիվացման, պրոբլեմների առաջադրմամբ կոնկրետ իրավիճակների անալիզի, բանավեճային կամ երկխոսական, խաղային և մրցակցային, դիտավորյալ ներկայացված սխալների վրա աշխատելու, ուսանողների մասնագիտական խոսքի զարգացման մեխանիզմները:

Այս տեսանկյունից բավականին աշխատանքներ ունեն տանելու դասավանդման մեթոդիկա դասավանդող դասախոսները և մասնավորապես մանկավարժության և հոգեբանության ամբիոնը, որը պետք է համագործակցի բոլոր ամբիոնների հետ փորձի փոխանակման շրջանակներում անցկացնելով համապատասխան դասընթացներ, բաց դասեր և այլն:

2011թ.-ից մասնաճյուղում ԵՊՀ-ի կողմից իրականացվում է «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման» վերապատրաստման ծրագիր: Մասնաճյուղի 70 դասախոսներ մասնակցել են «Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ», 60-ը՝ «Լսարանային ցուցադրությունների պատրաստում» (PowerPoint), 60-ը՝ «Համակարգչային գրագիտություն» (Կիրառական ծրագրեր՝ Word, Excel, Internet Explorer) վերապատրաստման դասընթացներին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մասնաճյուղի դասախոսների մեծամասնությունը դասընթացները վարում են տեղեկատվական և տեխնիկական համապատասխան միջոցների և համակարգերի կիրառմամբ: Դրան նպաստել են նաև 2013թ. դեկտեմբերից ՄԿՈԱ բաժնի կողմից իրականացվող «Ինչպես պատրաստել արդյունավետ պրեզենտացիաներ» թեմայով թրեյնինգները:

ՀԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Ներկայացնենք մասնաճյուղի ՄԿԾ-ներում նշված ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի նախատեսված մոտեցումները և վերլուծենք նրանց արդյունավետությունը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում 2009թ.-ից գործում է ստացած և ցուցաբերած գիտելիքների ստուգման և գնահատման հստակ քաղաքականություն, որն արտահայտված է ԵՊՀ բակալավրիատի ուսանողների գիտելիքների գնահատման կանոնակարգում (02.02.2006թ., ԵՊՀ ԳԽ), ԵՊՀ ԻՄ-ի կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրով ուսանողների գնահատման կարգում (28.02.2012թ., ԳԽ արձ.1), կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում (30.05.2009թ., ԳԽ), բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքի կատարման և գնահատման կարգում (28.02.2012թ., ԳԽ, արձ. թիվ 1), բակալավրի կրթական ծրագրով ավարտական աշխատանքների գրախոսման կարգում (28.02.2012թ. ԳԽ արձ.1):

Մասնաճյուղի կրթական ծրագրերում գնահատման մեթոդներն ընտրվում են կրթական ծրագրի կազմման ժամանակ, ներառված են ծրագրի կառուցվածքի մեջ և ամրագրված են կրթական վերջնարդյունքներին: Այսինքն, թվարկված են գնահատման այն մեթոդները, որոնց միջոցով գնահատվում են ուսանողների գիտելիքները և իմացությունը, գործնական մասնագիտական և ընդհանրական կարողությունները (*տես որևէ կրթական ծրագրի մասնագիր*):

Կրթական ծրագրեր կազմող աշխատանքային խմբերը գնահատման մեթոդների ընտրության ժամանակ հաշվի են առել «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներում» տրված գնահատման մեթոդների ընտրության մոտեցումները, դասական մեթոդների փորձը, փորձառու մանկավարժների առաջարկությունները, ուսումնասիրել են այլ առաջատար բուհերի գնահատման ձևերը և մեթոդները, տարբեր հեղինակների կողմից առաջակվող գնահատման ժամանակակից մոտեցումները: Ուսանողների գնահատման համար ընտրվել են ուսումնառության արդյունքների գնահատման այնպիսի մեթոդներ, որ հնարավոր լինի գնահատել ուսանողի յուրաքանչյուր ձեռքբերում, բացահայտել և գնահատել նրա մասնագիտական հմտություններն ու կարողությունները, տրված են ընտրության հնարավորությունները: Խմբերում կատարվել է նաև ընտրված մեթոդների համադրում և վերլուծություն այլ առաջատար բուհերում կիրառվող մեթոդների հետ (*Հավելված 3.3.1*):

Այդ վերլուծությունները ցույց են տվել, որ դիտարկված ՄԿԾ-ներն ընդգրկում են կրթական վերջնարդյունքների գնահատման համար ընդունելի գնահատման մեթոդների նախնական հաստատված ցանկը և ընտրության հնարավորությունները: Գնահատման մեթոդների ավելի նպատակային և ընդգրկուն ցանկը ներկայացվում է մասնագիտության համապատասխան դասընթացների ծրագրերում, ձևավորվող կոմպետենցիաների գնահատման մեթոդներն ու չափանիշները ներառում են նաև դասընթացների շրջանակներում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրեթե բոլոր բուհերում կիրառվում են գնահատման նույն մոտեցումները, օրինակ.

1. գիտելիքների և իմացության գնահատման համար հիմնականում կիրառվում են տեսության բանավոր հարցումներ, գործնական և տնային անհատական առաջադրանքներ, սեմինար պարապմունքներ, միջանկյալ գրավոր և բանավոր քննություններ, միջանկյալ ստուգումներ, եզրափակիչ բանավոր քննություններ, կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն և այլն,
2. հմտությունների գնահատման համար կիրառվում են գործնական, ստուգողական աշխատանքներ, թեստավորում, միջանկյալ գրավոր և բանավոր քննություններ, միջանկյալ ստուգումներ, եզրափակիչ բանավոր քննություններ, կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն և այլն,

3. կարողությունների գնահատման համար կիրառվում են գործնական առաջադրանքներ, զեկուցումներ, ռեֆերատներ, նախագծեր, խմբային աշխատանքներ, օտարալեզու մասնագիտական գրականության ընթերցում, ուսումնական և արտադրական պրակտիկաներ, կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն և այլն:

Նշենք, որ մասնաճյուղում գնահատման մեթոդներն ավելի մանրամասն ներկայացվում են 2014թ.-ից մասնաճյուղում ներդրված դասընթացների փաթեթներում (պորտֆոլիո), որոնք ներառում են ամբողջ դասընթացի և առանձին թեմաների գնահատման ռազմավարությունը, չափանիշները, գործիքները և ընթացակարգերը: Ուսանողներին հանձնարարված ռեֆերատները, զեկուցումները, պրեզենտացիաները, անհատական առաջադրանքները, ստուգողական աշխատանքները և այլն հնարավորություն են տալիս ուսանողներին վերլուծել իրենց ուժեղ և թույլ կողմերը, գնահատել իրենց ինքնուրույն կատարած աշխատանքների մակարդակը և դրանց կատարումից իրենց ձեռքբերումները, օգտագործել շնորհանդեսների ստեղծման և ներկայացման արդյունավետ տեխնոլոգիաներ, հետևել իրենց ընկերներին և նրանց իրական առաջընթացը, անընդհատ գնահատել նրանց յուրաքանչյուր ձեռքբերում:

Դասընթացների փաթեթների կիրառումը քայլ է ուսանողների գնահատման գործընթացի բարելավման ուղղությամբ:

Ըստ ուսումնառության արդյունքների գնահատման մեթոդների ճիշտ ընտրություն կատարելու համար դասախոսներին տրամադրվել է ՄԿՈԱ բաժնի կողմից մշակված «Կրթական վերջնարդյունքների գնահատում» մեթոդական ուղեցույցը:

Կրթական վերջնարդյունքների գնահատման ուղեցույցում ներկայացված են ուսանողի կրթական վերջնարդյունքների և ձեռքբերումների մակարդակը տարակարգելու ընդունելի չափանիշներ, նշված են կրթական վերջնարդյունքների գնահատման համար համարժեք մեթոդներ և ցուցիչներ, բերված են բնութագրիչ օրինակներ, նշված են գնահատումն ուղղակիորեն կրթական արդյունքների հետ արդյունավետ կապելու ձևերը:

Գնահատման տարբեր ձևերը և ուսանողի ու դասախոսի համագործակցությունն այդ գործընթացում աջակցում են ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը, նվազեցնում հակասական իրավիճակների քանակը, ուսանողին սովորեցնում արդարացի գնահատել իր ձեռքբերումները, դիտողությունների, սխալների նկատմամբ լինել համբերատար և իրեն դրսևորել համապատասխան ձևով:

Վերլուծենք, թե մասնաճյուղում ինչպես է ապահովվում ակադեմիական ազնվությունը, գրագողության դեմ պայքարի ինչպիսի մեխանիզմներ են գործում, և որքանով են նրանք արդյունավետ:

Մասնաճյուղում համաձայն իր պլանավորման (*ՌԾ 2011-15թթ., Խնդիր Iգ*) ապահովվել է կրեդիտային համակարգի կիրառությունը բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում: ԵՊՀ ԻՄ-ում ուսանողների գնահատման կարգը ներկայացված է յուրաքանչյուր ֆակուլտետի համար ամենամյա լույս տեսնող «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք»-ի 6-րդ բաժնում, ըստ որի ուսանողի ամփոփիչ գնահատումը կատարվում է 20 բալանոց համակարգով, գնահատման ձևավորման բաղադրիչներին հատկացված մասնաբաժիններին համապատասխան: Ուսանողի արդյունաբար գնահատականը ձևավորվում է ուսանողի մասնակցության գնահատումով (դասընթացին հաճախումների հաշվառման արդյունքում), կիսամյակի ընթացքում գիտելիքների միջանկյալ ստուգման արդյունքում (միջանկյալ քննություններ՝ թեստային կամ գրավոր,

միջանկյալ ստուգումներ՝ գրավոր կամ բանավոր) և քննաշրջանի եզրափակիչ գնահատման արդյունքում (բանավոր քննություն):

Ուսանողների միջանկյալ (ընթացիկ երկու քննությունների) գնահատման համար 2011-12 ուստարվանից մասնաճյուղի տնօրենության որոշմամբ (*հիմք արձ. թիվ 24, 12.12.2011թ.*) ընտրվել էր թեստային գնահատման (8-ական հարց, յուրաքանչյուրը 0.5 միավոր) մեխանիզմը՝ նախկին առավելագույն 4 միավոր գնահատումով կազմված գրավոր տարբերակների փոխարեն: Թեստային գնահատումը նպատակ ուներ ուսանողին զերծ պահել դասախոսի սուբյեկտիվ մոտեցումից և ազատ դրսևորել իր գիտելիքները: Թեստերով գնահատման վերաբերյալ ուսանողների և դասախոսների բանավոր կարծիքները՝ արտահայտված ամբիոնների, ուսանողական խորհրդի նիստերում, բացահայտեցին թեստերի մի շարք բացասական կողմերը, մասնավորապես՝ պատահական նշումով միավոր վաստակելու հնարավորությունը, ոչ պատշաճ կազմված թեստերը և այլն: Դրա արդյունքում մասնաճյուղի տնօրենության հերթական նիստում (*արձ. թիվ 17, 10.09.2012թ.*) առաջարկվեց թեստերը կազմել 4 տարբեր թեմաներից երկու ենթահարց սկզբունքով և յուրաքանչյուր թեման 1 միավոր գնահատումով, այսինքն, ուսանողը թեմայից 1 միավոր վաստակում է երկու ենթահարցերին ճիշտ պատասխան նշելու դեպքում: Այս մոտեցումը ենթադրում էր ուսանողից ակնկալել հերթական թեմայի լիարժեք իմացություն:

Նոր կրթական չափորոշիչներին համապատասխան ուսանողի մոտ պետք է ձևավորվեն որոշակի գիտելիքներ, ձեռք բերվեն գիտելիքների կիրառման որոշակի հմտություններ և իրեն դրսևորելու կարողություններ, հետևաբար գնահատման համակարգը պետք է բացահայտի ուսանողի վերջնարդյունքներն ըստ նշված 3 բաղադրամասերի: ՄԿՈԱ բաժինն ուսումնասիրելով այլ առաջատար բուհերի գնահատման համակարգերը 2014թ. մայիսից դասախոսների և ուսանողների քննարկմանն է ներկայացրել ըստ ուսումնառության արդյունքների գնահատման 3 նախագծեր: Դրանք ներկայացնում են, թե ինչպես գործնական, լաբորատոր, սեմինար դասընթացներից, ինքնուրույն աշխատանքներից և տարբեր մեթոդներով բացահայտվող ուսանողի ձեռքբերումները ներառել գնահատման միավորների մեջ:

Առաջարկված նախագծերը դասախոսներն օգտագործում են իրենց դասընթացների փաթեթներում: Իրենց դասընթացի յուրահատկություններից ելնելով նրանք փաթեթում ներկայացնում են ուսանողերի գնահատման իրենց մոտեցումները և դրանց հիմնավորումները:

Մասնաճյուղում գնահատման կարգին ուսանողների տեղեկացված լինելն օգնում է ապահովել գնահատման ազնվությունն ու թափանցիկությունը: Ըստ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի՝ ուսումնական խորհրդատուների ծառայությունը (կուրատորները) ֆակուլտետներում նոր ուսումնական տարվա առաջին տասնօրյակում՝ հիմնականում առաջին կուրս ընդունված ուսանողների հետ, իրականացնում են խմբային և անհատական խորհրդատվություններ, նրանց ծանոթացնելով մասնաճյուղում ուսանողների գնահատման կարգին, իսկ բարձր կուրսերի ուսանողներին ներկայացնում են գնահատման կարգում տեղի ունենցած փոփոխությունները՝ եթե այդպիսիք կան: Յուրաքանչյուր դասախոս իր դասընթացի շրջանակներում ուսանողերին ներկայացնում է իր փաթեթում ամրագրված գնահատման չափանիշները և ընթացակարգերը, իսկ ամբիոններն ապահովում են այդ փաթեթների հասանելիությունը ուսանողներին:

ՄԿՈԱ (նախկինում՝ ԿՈԱԳ) բաժնի որոշմամբ (*հիմք ՄԿՈԱ բաժնի 21.02.2013թ. արձ. թիվ 2 և 23.05.15թ. արձ. թիվ 5*) ՈԻՄԳ-ի հետ միասին 2012-13 և 2014-15 ուստարիների I կիսամյակի քննաշրջանից հետո դասախոսների և ուսանողների շրջանում հարցման միջոցով կատարվել է ուսումնասիրություն՝ մասնաճյուղում ուսանողների գնահատման վերաբերյալ, ընդ որում 2-րդ


հարցումն իրականացվել է լրամշակված և վերախմբագրված հարցաթերթերով, ապա հաստատման է ներկայացվել նաև այդ հարցման կանոնակարգը: Այդ հարցումների նպատակն էր պարզել, թե որքանով է գործող համակարգը թույլ տալիս բացահայտել ուսանողի գիտելիքները, հմտությունները և կարողությունները, որքանով է այն հնարավորություն տալիս օբյեկտիվ և թափանցիկ գնահատել ուսանողի ձեռքբերումները, և ինչը չի բացահայտվում գնահատման կիրառվող համակարգում: Ապա տեղեկատվության հավաքագրման և մշակման միջոցով հետազայում վերանայել և բարելավել ուսանողների գնահատման չափանիշները, մեթոդները, գնահատման օբյեկտիվության և ուսանողի ցուցաբերած արդյունքների լիարժեք արտացոլման հնարավորությունները:

Երկու հարցման արդյունքներն ամփոփվել են, վերլուծվել, ներկայացվել են բոլոր ֆակուլտետների դեկանատներ, տեղադրվել են մասնաճյուղի կայքում, իսկ 2015թ.-ին կատարվել է նաև 2 հարցումների արդյունքների համեմատական վերլուծություն:

Գնահատման չափանիշների վերաբերյալ հարցերն ընդգրկվել են 2015թ.-ին՝ վերանայված հարցաշարի մեջ և հարցմանը մասնակցած **31** դասախոսների **93.6%**-ը, իսկ **90** ուսանողների **64,5%**-ը նշում է, որ դասընթացի կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշներն ուսանողներին ներկայացվում է կամ կիսամյակի սկզբում, կամ կիսամյակի սկզբում և յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ:


Թիվ	Ե՞րբ են ներկայացվում կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշները /2015թ./	Ուսանողներ	Դասախոսներ
1	չեն նշել	13,3%	
2	կիսամյակի սկզբում	35,6%	45,2%
3	ընթացիկ քննությունից կամ ստուգումից առաջ	6,7%	
4	եզրափակիչ քննությունից առաջ	2,2%	
5	յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ	12,2%	3,2%
6	կիսամյակի սկզբում և յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ	28,9%	48,4%
7	չեն ներկայացրել ընդհանրապես	1,1%	3,2%

Հարցմանը մասնակցած դասախոսների **96.8%**-ը, իսկ ուսանողների՝ **81.1%**-ը գտնում է, որ նախապես սահմանված գնահատման չափանիշները պահպանվում են: Համապատասխանաբար, **48.9%-ը և 32.3%-ը** գտնում է, որ ուսանողների առաջարկով կատարվել է գնահատման չափանիշների փոփոխություն:




Ըստ 2015թ.-ի հարցման արդյունքների, մասնաճյուղում ուսանողների կրթական վերջնարդյունքների գնահատման ձևերը՝ միջանկյալ բանավոր, գրավոր, թեստային քննություններ և ստուգումներ, եզրափակիչ բանավոր քննություններ, հիմնականում բացահայտում և զարգացնում են ուսանողների գիտելիքները (դասախոսական հարցման միջին



գնահատականը՝ 4.22, ուսանողականը՝ 4.3), և քիչ են նպաստում ուսանողների հմտությունների և կարողությունների զարգացմանը (միջին գնահատականն ըստ դասախոսների չի գերազանցում 4-ին), թեկուզև, նախապես պլանավորած են դասընթացի փաթեթում: Դրանք ամբողջությամբ չեն կարողանում արտացոլել ուսանողների բոլոր ձեռքբերումները, թեպետ ուսանողները գտնում են, որ իրենց հմտությունների և կարողությունների գնահատման տեսանկյունից վերջին տարիներին առաջընթաց կա (միջին գնահատականն ըստ ուսանողների գերազանցում է 4-ին, սակայն չի գերազանցում 4.6-ը):



2015թ.-ի հարցմանը մասնակցած դասախոսների 48.4%-ը և ուսանողների 62.2%-ը գտնում է, որ եզրափակիչ բանավոր քննության համար հատկացված 10-ը միավորն օգնում է դասախոսին լիարժեք կողմնորոշվել ուսանողի ցուցաբերած գիտելիքների գնահատման ժամանակ, իսկ ուսանողին՝ վաստակել իր ցուցաբերած գիտելիքներին համապատասխան միավոր /միջին միավորը՝ 4.61, 4.58/: Սակայն նրանք գտնում են, որ եզրափակիչ բանավոր քննության ժամանակ նույնպես ըստ արժանվույն չեն բացահայտվում ու գնահատվում ուսանողների հմտությունները (4.27 և 4.42) և առավել ևս կարողությունները (4.00 և 4.42).




Համեմատելով ուսանողների գնահատման վերաբերյալ երկու ուստարիների հարցումների արդյունքները հարցմանը մասնակցած ուսանողների 85%-ից ավելին գտնում է, որ եզրափակիչ բանավոր քննությունների ժամանակ իրենց ձեռքբերումների գնահատման ասպարեզում առաջընթաց կա (2013թ. միջին միավորը՝ 4.14, 2015թ.՝ 4.42), իսկ դասախոսների միայն 64.5%-ն է գտնում, որ եզրափակիչ քննությունը բացահայտում է ուսանողի հմտություններն ու կարողությունները, ընդ որում այն նվազել է (2013թ.՝ 4.35, 2015թ.՝ 4.00, սա հավանաբար պայմանավորված է կոմպլեքսների և նրանց գնահատման վերաբերյալ դասախոսների իրազեկվածության մակարդակի բարձրացմամբ, համապատասխան վերապատրաստման դասընթացներից ձեռք բերած գիտելիքներով):



Այս հարցման խնդիրներից մեկն է բացահայտել թեստային քննությունների արդյունավետությունը և պարզել, թե որքանով են թեստերը բացահայտում ուսանողների ձեռքբերումները:


Ըստ դասախոսների, թեստային քննություններն արդյունավետ չեն և չեն բացահայտում ուսանողների ձեռքբերումները, և նախորդ հարցման համեմատ միջին միավորն էապես նվազել է (2013թ.՝ 3.15, իսկ 2015թ.՝ 2.83-3.04).




Նշենք,

որ ամբիոններում քննարկումների և դասախոսների փաստարկների ու հիմնավորումների արդյունքում 2014-15 ուստարվանից թեստերը կիրառվում են յուրաքանչյուր դասախոսի նախասիրությամբ:



Ուսանողների գնահատման օբյեկտիվության և թափանցիկության վերաբերյալ երկրորդ հարցման արդյունքները բավականին հուսադրող են, և հարցմանը մասնակցած դասախոսների ավելի քան 80%-ը, իսկ ուսանողների ավելի քան 73%-ը գտնում է, որ գնահատման մեթոդները հնարավորություն են տալիս դասախոսին լինել օբյեկտիվ (միջին միավորը համապատասխանաբար՝ 4.41 և 4.16) և ուսանողները գնահատվում են թափանցիկ (4.33 և 4.32), թեպետ գտնում են, որ այն թույլ չի տալիս բացառել գրագողությունը (3.04 և 3.84), մասնավորապես թեստերը մեծացնում են արտագրելու հնարավորությունները, որի արդյունքում հնարավոր չի լինում խուսափել գրագողությունից: Գրագողությունից խուսափելու համար դասախոսները կազմում են ուսանողների քանակին հավասար իրարից տարբեր թեստեր, հանձնարարում են տնային անհատական առաջադրանքներ, անց են կացնում տարբեր տարբերակներով ստուգողական աշխատանքներ, և իհարկե գնահատումների ժամանակ լսարանում պահպանում են վերահսկումը:




Նախորդ հացման արդյունքների հետ համեմատած և՛ դասախոսները, և՛ ուսանողները գտնում են, որ գնահատման կիրառվող մեթոդները դարձել են ավելի արդյունավետ և բարձրացրել են գնահատման օբյեկտիվությունը (համապատասխանաբար, 4.08-ից 4.41, 3.53-ից 4.16), ինչը ամբիոններում իրականացվող բազմաբնույթ քննարկումների, փորձի փոխանակման և ձևավորված ուսանողական տրոն միջավայրի ձևավորման և մոտեցումների արդյունք է.



Ըստ ուսումնառության արդյունքների ուսանողների գնահատման և քննական գործընթացների ճիշտ կազմակերպման արդյունքում բարձրացել է ուսանողների վստահությունն իրենց ստացած գնահատականի նկատմամբ: Ուսանողների գրեթե 95%-ը գտնում է, որ իրեն հայտնի է իր գնահատականի ձևավորման ընթացքը, ինչի հետ համամիտ են դասախոսների գրեթե 97%-ը, ինչը ասում է գնահատման ակադեմիական ազնվության ապահովման մասին,




և բոլոր դասախոսները պնդում են, որ իրենք ուսանողին նաև հիմնավորում են նրա ձեռք բերած միավորը, ինչի հետ համամիտ են ուսանողների 85,6%-ը: Հարցմանը մասնակցած բոլոր դասախոսները պնդում են, որ իրենք արձագանքում են ուսանողների բոլոր բողոքարկումներին, իսկ նրանցից 45%-ը կատարել է ուսանողի ձեռք բերած միավորի փոփոխություն.



Հարցաթերթն իր մեջ պարունակել է նաև առաջարկությունների բաժին, ըստ որի եթե հարցման մասնակիցները գտնում են, որ գնահատման գործող բազմագործոն համակարգը պետք է փոխարինել այլ համակարգով, ապա առաջարկվող տարբերակներից որը կնախընտրեին: Համաձայն մշակված արդյունքների հարցմանը մասնակցած դասախոսների 39%-ը, իսկ ուսանողների 31%-ը, ինչպես և նախորդ հարցման ժամանակ, կողմնակից է միջանկյալ գրավոր քննությունների և եզրափակիչ բանավոր քննության տարբերակին:

Ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքներով մասնաճյուղի շրջանավարտները բավարարված են իրենց գիտելիքների գնահատման և ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից և նրանց միջին գնահատականը վերջին տարիներին բարելավվել է.



Մասնաճյուղում ներդրված է ԵՊՀ-ի կողմից տրամադրված ուսանողների արդյունքների գրանցման և մշակման SuperVision էլեկտրոնային ավտոմատացված համակարգը:

Քննական արդյունքների հասանելիության և թափանցիկության ապահովման համար ընթացիկ քննությունների ձևաթղթերը, տետրերը ստուգվում են լսարաններում, նաև գրագոյությունից խուսափելու համար քննություններին կարող են մասնակցել ՈՒՄՎ-ի և ՈՒԽ-ի ներկայացուցիչներ, ուսումնական խորհրդատուն, դեկանը, ծնողներ, իսկ հրապարակայնության ապահովման համար քննաշրջանի արդյունքները փակցվում են ֆակուլտետների տեղեկատվական ցուցատախտակների վրա, տեղադրվում են մասնաճյուղի կայքում: Դա իրազեկում է ուսանողներին նաև իրենց ընկերների ցուցաբերած արդյունքների մասին՝ ապահովելով թափանցիկություն և անկողմնակալություն հետագա գործունեության համար: Բանավոր քննությունների դեպքում՝ տեղում, իսկ գրավոր քննությունների դեպքում՝ արդյունքների հրապարակումից հետո գնահատման արդյունքի հետ համաձայն չլինելու դեպքում ուսանողն այն կարող է բողոքարկել:

Մասնաճյուղում գործում է բանավոր և գրավոր քննության, ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման կարգ: Ուսումնառողների գիտելիքների ստուգման և գնահատման, բողոքարկման ընթացակարգերը փակցվում են ֆակուլտետների տեղեկատվական ցուցատախտակների վրա: Այդ ընթացակարգերը պարբերաբար վերանայվում են, յուրաքանչյուր քննաշրջանից հետո քննարկվում և վեր են լուծվում արդյունքները, ըստ որի

ուսումնական տարվա ավարտին կատարվում են համապատասխան փոփոխություններ: Կարգի ի ցույց դրված լինելը ուսանողին օգնում է ճիշտ ներկայացնել իր բողոքը և լինել տեղեկացված ու պաշտպանված: Նշենք, որ մասնաճյուղում քննական արդյունքների բողոքարկումները գրանցվում են, ուսումնա-մեթոդական վարչության տեղեկատվական ծառայությունն իրականացնում է բողոքարկումների ընթացակարգին համապատասխան բոլոր անհրաժեշտ փաստերի ամրագրում:

ՉՄՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Վերլուծենք և հիմնավորենք մասնաճյուղի կրթական ծրագրերի **բովանդակային հուսալիությունը**, հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ նրանց **համադրելիությունը**, ինչպես նաև այդ մոտեցումների **արդյունավետությունը**: Յուրաքանչյուր տանք, թե որքանով են նրանք **նպաստում** ուսումնառողների ու դասավանդողների **շարժունությանը**:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը մինչև 2010-11 ուս.տարին հիմնականում կիրառել է ԵՊՀ համապատասխան մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրերը: Այն մասնագիտությունների համար, որոնց ծրագրերը չէին իրականացվում ԵՊՀ-ում («Կիրառական արվեստ», «Բնապահպանություն և բնօգտագործում») մշակվել և կիրառվել են սեփական կրթական ծրագրեր՝ որպես հիմք ընդունելով ՀՀ, ՌԴ նմանատիպ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների փորձը:

Մասնաճյուղն իրականացնում է իր մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ բուհերի կրթական ծրագրերի հետ համահունչություն ստեղծելու քաղաքականություն: Կրթական ծրագրեր կազմող աշխատանքային խմբերը, մասնագիտական ամբիոնները, ՄԿՈԱ բաժինը և ՈՒՄՎ-ն ուսումնասիրել են առաջին հերթին ԵՊՀ-ի, նաև Հայաստանի Հանրապետության և արտերկրի այլ առաջատար բուհերի համապատասխան կրթական ծրագրերը, իրակացրել համեմատական վերլուծություն մասնաճյուղի և այդ բուհերի կրթական ծրագրերի միջև.

- ըստ նրանց կառուցվածքի (**Հավելված 3.1.3**),
- կրթամասերի միջև կրեդիտների բաշխվածության (**Հավելվածներ 3.1.4, 3.4.1, 3.4.2, 3.4.3**),
- ըստ ծրագրի նպատակների և խնդիրների (**Հավելված 3.1.5**),
- ըստ դասավանդման և ուսումնառության մեթոդների, գնահատման մեթոդների (**Հավելվածներ 3.2.1, 3.3.1**),
- ըստ ծրագիրն իրականացնող դասընթացների ցանկի և նրանց կրեդիտների (**Հավելվածներ 3.4.1, 3.4.2**),
- ըստ մասնագիտության դասընթացների բովանդակության համադրելիության (**Հավելված 3.4.4**):

Այս վերլուծությունների արդյունքները վկայում են մասնաճյուղի կրթական ծրագրերի բովանդակային հուսալիության մասին, և քանի որ համադրելի են այլ առաջատար բուհերի համապատասխան կրթական ծրագրերի հետ գրեթե բոլոր տեսանկյուններից, հետևաբար վստահ կարելի է ասել, որ նրանք կապահովեն մեր ուսանողների շարժունությունը:

Օրինակ, հիմք ընդունելով **ՀՀ կառավարության որոշումը** բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության մասին, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈԻՄՎ-ի կողմից ուսումնասիրվել են մասնաճյուղի և տարբեր բուհերի մի շարք մասնագիտությունների կրթական ծրագրերի համադրելիությունն ըստ կրթամասերի, նրանցում դասընթացների բաշխվածության և նրանց հատկացված կրեդիտների:

Մասնավորապես համեմատվել են.

1. ԵՊՀ ԻՄ-ի, Երևանի պետական մանկավարժական համալսարանի և Վանաձորի պետական համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրերը (**Հավելված 3.4.2**), որոնք համադրելի են իրենց կառուցվածքով, կրթամասերով, կրթամասերում կրեդիտների թվով, դասընթացներով և նրանց հատկացված կրեդիտներով (Շարժունության կամ տեղափոխման դեպքում ուսանողների հավաքած կրեդիտների թիվն ըստ կիսամյակների չպետք է գերազանցի 20-ը): Դիտարկելով ներկայացված հաստատությունների ուսումնական պլանները հիմնավորվում է, որ ուսանողը մեկ բուհից մյուս բուհ կարող է տեղափոխվել միայն մինչև 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակը: Պատճառը հաստատության կողմից տրվող որակավորումն է. մասնաճյուղն այդ մասնագիտության համար տալիս է բանասիրության բակալավրի, իսկ մյուս 2 բուհերը՝ մանկավարժության բակալավրի որակավորում, այսինքն այդ բուհերում ընդգրկված են ավելի շատ մանկավարժական կրթամասի առարկաներ: Հիմնականում ընդհանուր մասնագիտական կրթամասի առարկաները նույնն են, կրեդիտների չնչին տարբերությամբ:

2. ԵՊՀ ԻՄ-ի «Տնտեսագիտության տեսություն», Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի **“Էկոնոմիկա”** 080100.62 և Լոնդոնի Միդլսեքսի համալսարանի **“Business Economics”** մասնագիտությունների կրթական ծրագրերը (**Հավելված 3.4.1**): Ներկայացված համապատասխանության քարտեզը ցույց է տալիս, որ ԵՊՀ ԻՄ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության կրթական ծրագիրն իր կրթամասերով և դասընթացներով իրականացնում է եվրոպական պահանջներին համադրելի բակալավրիական կրթություն: Հարկ է նկատել, որ ՄՊՀ կրթական ծրագրում բավականին տեղ է հատկացված ուսանողի ընտրությամբ դասընթացներին, որոնց ցանկը բացահայտ նշված չէ, իսկ ԵՊՀ ԻՄ-ի կամընտրական դասընթացների ողջ ցանկը բացահայտ ներկայացված է ուսանողներին, և ընդ որում ընտրության լայն հնարավորությամբ, որը ուսանողների քիչ թվի դեպքում միգուցե արդարացված չէ: Նշենք, որ այստեղ ներկայացված չեն դասընթացների իրականացման կիսամյակները, որն իհարկե կարևոր նշանակություն ունի ուսանողների շարժունության ապահովման համար:

Միջազգային համատեղ կրթական ծրագրեր դեռևս չունենալու պատճառով մասնաճյուղը չունի ուսանողների և դասախոսների փոխանակումն ու շարժունությունն ապահովելու անմիջական համաձայնագրեր այլ ուսումնական հաստատությունների հետ: Մասնաճյուղի ներսում և Հանրապետության տարածքում շարժունությունը կարգավորվում է կրթության մասին օրենքով, միջբուհական շարժունությունը կարգավորող կարգով, բուհերի կանոնադրություններով, ՀՀ այլ օրենքներով, օրենսդրական ակտերով:

Առաջնորդվելով ԵՊՀ-ի ուսումնառության նույն ծրագրերով, մասնաճյուղը կարող է օգտագործել մայր բուհի հնարավորությունները՝ արտասահմանյան հաստատությունների հետ համագործակցելու համար, սակայն առայժմ դա տեղի չի ունենում: Հետևաբար, մասնաճյուղը բավականին խնդիրներ ունի այս ուղղությամբ, և անհրաժեշտ է ակտիվացնել գործունեությունն այս ասպարեզում:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ներդրված ուսումնառության կրեդիտային ECTS համակարգը և համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածը ամբողջությամբ համատեղելի է կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի հետ, որը և կապահովի նաև մեր ուսանողների շարժունությունը միջազգային կրթական համաձայնագրերի առկայության դեպքում, նաև հիմք կհանդիսանա փորձի փոխանակման նպատակով տարբեր բուհերի միջև փոփոխհամագործակցության, ուսանողների փոխադարձ ուսումնառության համար: Այդ նպատակով մասնաճյուղում կարևորվում և ապահովվում է համապատասխան **ուսանողակենտրոն** ուսումնառություն (հստակ սահմանված կրթական վերջնարդյունքներով) և մասնագիտությունների կրթական ծրագրերի ներդրումը: Այդ կրթական ծրագրերը ուսումնառողին հնարավորություն կտան իր վաստակած կրեդիտներով և ստացած ընթացիկ ուսումնառությամբ ուսումը շարունակել այլ կրթական ծրագրերով՝ մասնաճյուղում, կամ ազգային և միջազգային այլ բուհերում՝ բակալավրիատի մակարդակով մասնագիտական հարակից ոլորտներում, իսկ մագիստրատուրայում՝ ազատ, առանց նախապայմանների:

Մասնագիտության կրթական ծրագրերի տարանջատումը տեսական, գործնական և այլ բաղադրիչների իրականացվում է առարկայական ծրագրերի պլանավորմանը համապատասխան՝ նրանց համար հստակ նախատեսված ժամաքանակով, որը համապատասխանում է «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավորության որոշմանը, որն իր արտահայտումն է գտնում մասնագիտության ուսումնական պլաններում: Յուրաքանչյուր առարկայի դասավանդումն իրականացվում է ըստ համապատասխան մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական մոդուլների նկարագրիչների նախապես պլանավորված ժամանակացույցով, և իր մեջ ներառում է տեսական գիտելիքների ձեռքբերման և գործնական հմտությունների և կարողությունների ամրագրման մասեր:

Կրթական ծրագրեր կազմող աշխատանքային խմբերում կատարվել է ծրագրում ուսումնառողի և շրջանավարտի կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունների նախատեսման համեմատական վերլուծություն տարբեր բուհերի կրթական ծրագրերի հետ (**Հավելված 3.1.6**): Համեմատվել են ուսումնասիրվող ծրագրերում կոնկրետ մասնագիտության համար շրջանավարտներին առաջադրվող մասնագիտական ոլորտները, նրանց ապագա գործունեության տիրույթները, և հնարավոր աշխատանքները խորհրդատվական ընկերություններում, ձեռնարկություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և այլն: Արդյունքները ցույց են տվել, որ ըստ ներկայացված առաջարկների մեր կրթական ծրագրերը ապահովում են տվյալ մասնագիտության համար միջազգային և ազգային հնարավոր տիրույթները:

Մասնաճյուղն ուսումնասիրել է իր շրջանավարտների հետագա աշխատանքային գործունեությունը գործատուների շրջանում անցկացվող հարցման միջոցով (այն անց է կացվել 2013, 2014 և 2015թթ.): Հարցման համապատասխան բաժինը նպատակ ունի պարզելու տարբեր կազմակերպությունում աշխատող ԵՊՀ ԻՄ շրջանավարտների, այդ թվում իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների քանակը (վերջին 3 տարիների համար): Ըստ այդ հարցման 2015թ.-ի հունիսի դրությամբ աշխատող շրջանավարտների 65.7%-ն աշխատում է իր մասնագիտությամբ, իսկ 79.7%-ը՝ աշխատանքի է ընդունվել մրցույթով: Ուղղակի պետք է նշել, որ հարցումն անց է կացվել քիչ թվով գործատուների շրջանում (համապատասխանաբար, 16, 24, 37 գործատուներ) և ակնհայտ է, որ աշխատող շրջանավարտների քանակը (277) բոլոր շրջանավարտների քանակի համեմատ բավականին փոքր է:

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների թիվը	2013	2014	2015
	16	24	37

Ցուցանիշ	2014		2015	
	Շրջ. Բանակը	%	Շրջ. Բանակը	%
Տարբեր կազմակերպություններում աշխատող ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտներ	109		277	
Նրանցից աշխատում են իրենց մասնագիտությամբ	83	76,15%	182	65,70%
Նրանցից աշխատանքի են ընդունվել մրցույթով	60	72,29%	145	79,67%

Այնուամենայնիվ պետք է նշել, որ հարցմանը մասնակցած գործատուների 94.6%-ը իր մերձավորներին և ընկերներին խորհուրդ կտա ընդունվել ԵՊՀ ԻՄ մասնաճյուղ, ինչ նշանակում է, որ նրանք որպես գործատուներ հիմնականում բավարարված են մասնաճյուղում իրականացվող մասնագիտական կրթությունից, հետևաբար նաև՝ մեր կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունից:

Կրթության որակի շարունակական բարելավման համար մասնաճյուղը կարևորում է տեղական ու արտերկրի, մասնավորապես Եվրոպայի, առաջատար բուհերի առաջավոր փորձը, նրանց նվաճումները գիտության և մանկավարժության ասպարեզում, կրթության և ուսումնառողների նկատմամբ նրանց համակարգային վերաբերմունքը և այլն: Նշված արժեքների և որակների ձեռք բերման համար անհրաժեշտ է վարել նպատակային քաղաքականություն և իրականացնել համապատասխան գործընթացներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Ներկայացնենք մասնաճյուղում ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և վերլուծենք դրանց արդյունավետությունը:

ԵՊՀ ԻՄ-ն առաջնորդվելով կրթության որակի բարձրացման և բարելավման արդի պահանջներով վարում է ընտրված մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման, վերանայման հստակ քաղաքականություն:

Մինչև 2013-14 ուստարին մասնաճյուղում տարբեր մասնագիտություններով կրթությունն իրականացվել է ուսումնական պլաններում ներառված դասընթացների ծրագրերով (առարկայական ծրագրերով), և դրանց վերանայումը կատարվել է դասախոսների կողմից, փոփոխությունները հաստատվել են համապատասխան ֆակուլտետների խորհուրդների կողմից, ներկայացվել ՈԻՄՎ, որպեսզի արտացոլվեն «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք»-երում:

Այդ ընթացքում ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերը ներքին կամ արտաքին փորձաքննություն չէին անցնում, բացակայում էին դրանց արդյունավետությունը գնահատող համակարգված մեխանիզմները: Ծրագրերի բովանդակության, արդյունավետության գնահատման, վերանայման հարցերով զբաղվել է համապատասխան մասնագիտական ամբիոնը՝ ուսումնա-մեթոդական վարչության հսկողությամբ: Ծրագրերը կազմելիս և դասընթացների կազմն ընտրելիս առավելապես հաշվի էին առնվել առկա պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական հնարավորությունները, քան թե անհրաժեշտ կրթական վերջնարդյունքներով պայմանավորված բովանդակության ապահովումը: Ըստ ամբիոններում անցկացված

դասախոսների բանավոր հարցումների արդյունքների կարելի է նշել, որ առարկայական ծրագրերը դասախոսների կողմից վերանայվել են նախորդ ուստարվա կրթական գործընթացի արդյունքներով, համաձայն.

- դասընթացի շրջանակներում ուսանողների հաջողությունների և ձախողումների,
- ուսանողների կողմից կատարված առաջարկների,
- փոխադարձ դասալսումների շնորհիվ փորձի փոխանակման արդյունքում նոր մեթոդների ձեռք բերման,
- ՀՀ կրթական համակարգի փոփոխությունների և բարեփոխումների պահանջների,
- կրթության ասպարեզում մասնաճյուղի ռազմավարության պահանջների փոփոխությունների,
- աշխատաշուկայի պահանջների փոփոխության,
- արտերկրի առաջատար բուհերի համապատասխան առարկայական ծրագրերի,
- գիտության ժամանակակից նվաճումների և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման:

2013-14 ուստարվանից մասնաճյուղում գործում են կրթական վերջնարդյունքներով ձևակերպված կրթական ծրագրերը:

Կրթական ծրագրերի որակի ապահովման, մշտադիտարկման և հետագա բարելավման նպատակով մասնաճյուղը 2014թ. հոկտեմբերից հիմք ընդունելով ԵՊՀ համապատասխան կարգը, մշակել և ներդրել է մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը:

Ծրագրերի կանոնավոր մոնիթորինգի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանված նպատակներին ու կրթական չափորոշիչի պահանջներին: Նրա խնդիրն է գնահատել ծրագրի և նրա բաղկացուցիչ մասերի սահմանած կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը, դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման գործընթացների արդյունավետությունը, բացահայտել և վեր հանել ծրագրի թերություններն ու իրականացման դժվարությունները, կատարել նախորդ տարվա կատարողականի վերլուծություն և այլն:

Որպես մշտադիտարկման և գնահատման լավ մեխանիզմ մասնաճյուղում 2014թ. սեպտեմբերից ներդրված են պորտֆոլիոները՝ փաթեթները, որոնք համալրում են կրթական ծրագրի փաստաթղթային փաթեթը՝ ամբողջացնելով նրա ակնկալիքները: Փաթեթների միջոցով դասախոսներն իրենց դասընթացների շրջանակներում իրականացնում են դասընթացի կատարողականի վերլուծություն, գնահատում են դասընթացի ուժեղ և թույլ կողմերը, մշակում բարելավման նոր առաջարկներ՝ հաջորդ ուստարվա համար: Դասախոսների մշտադիտարկման և գնահատման արդյունքները քննարկվում են ամբիոններում, ապա ներկայացվում ֆակուլտետի խորհրդում հաստատման:

Ծրագրերի մշտադիտարկումն իրականացվում է նաև դասալսումների միջոցով, նաև դասընթացի արդյունավետ իրականացման վերաբերյալ ուսանողների կարծիքների հավաքագրման միջոցով՝ դասախոսի կողմից կազմված հատուկ հարցաշարերի միջոցով, որոնց վերլուծություններն ամրագրվում են դասընթացի փաթեթում:

Մշտադիտարկման լավ մեխանիզմ է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների ընդգրկումը: 2014-15 ուստարվանից մասնաճյուղում ներդրվել է այդ հանձնաժողովների հաշվետվության նոր ձևաթուղթ, որն ամփոփում է հանձնաժողովի կարծիքը շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների մակարդակի վերաբերյալ, ավարտական աշխատանքների թեմաների, դրանց համապատասխանության և

շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունների վերաբերյալ և առաջարկություններ՝ շրջանավարտների կողմից դրանց իրականացման հետագա բարելավման ուղղությամբ:

Որպես մշտադիտարկման և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման մեխանիզմներ մասնաճյուղում հաջողությամբ ներդրված են դեռևս 2011թ.-ից իրականացվող հարցումները՝ արտաքին և ներքին շահակիցների շրջանում: Մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների, ուսանողների և շրջանավարտների մասնաճյուղում ուսումնառությունից բավարարվածության վերաբերյալ կարծիքների հավաքագրման և համապատասխան հարցերի արդյունքների վերլուծության միջոցով պարզաբանվում են կրթական ծրագրի արդյունավետությունը, նրա պահանջվածությունը և աշխատաշուկայի պահանջարկին բավարարելը:

Այդ արդյունքների վերլուծությունը բացահայտում է տարածաշրջանում մասնաճյուղի բարձր վարկանիշը և պահանջվածությունը, այսինքն մասնաճյուղի կրթական ծրագրերի արդյունավետությունը: Դրա վառ օրինակն է աշխատաշուկայում մասնաճյուղի շրջանավարտների բարձր հեղինակությունը և մրցունակությունը, աշխատավայրերում նրանց մասնագիտական պատրաստվածության և գիտելիքների դրսևորումը և այլն: Պետք է նշել, որ հարցումների արդյունքները բացահայտել են նաև մեր շրջանավարտների մասնագիտական կարողությունների և պրակտիկ ունակությունների ոչ բավարար մակարդակը: Դպրոցների մանկավարժները բավարարված են մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական պատրաստվածությունից, նրանք գտնում են, որ մեր ուսանողներն ունեն տեսական բարձր գիտելիքներ, սակայն չեն տիրապետում դասավանդման ժամանակակից մեթոդներին, քիչ են պրակտիկ հմտությունները:

Այդ խնդիրներն ուսումնասիրվում են ֆակուլտետներում, մասնագիտական ամբիոններում և ՄԿՈԱ բաժնում, փնտրվում կրթության որակի ապահովման համապատասխան մեխանիզմներ, մշակվում են արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ընթացակարգեր: Մասնավորապես, դասալսումների, փոխադարձ դասալսումների, փորձի փոխանակման և վերապատրաստումների միջոցով առաջատար մասնագետներն աջակցում են իրենց կոլեգաներին, ներդնում են դասավանդման և ուսումնառության ու գնահատման նոր ժամանակակից մեթոդներ: ՄԿՈԱ բաժնի մասնագետներն իրենց խորհրդատվությամբ աջակցում են կրթական ծրագրի և պորտֆոլիոներում վերջնարդյունքների ձևակերպման և նրանց գնահատման համապատասխան մեթոդների ընտրության հարցում:

Մշտադիտարկման և գնահատման արդյունքները ներկայացվում են ֆակուլտետների ղեկանների և ամբիոնների վարիչների հաշվետվություններում:

Կրթական ծրագրերի պարբերական վերանայման նպատակը իրականացման լրիվ շրջափուլի արդյունքներով նրա արդիականության գնահատումն է, այն շարունակելու հիմնավորվածությունը, նրա մատուցման որակի ապահովումը: Մասնաճյուղի որակի ապահովման ներքին գործընթացները պետք է նպաստեն և խրախուսեն բոլոր աստիճաններում կրթական ծրագրերի արդյունավետության և որակի բարձրացումը, ապահովեն դրանց համապատասխանությունը մասնաճյուղի և տվյալ կրթական ծրագրի առաքելությանը:

Նկարագրենք վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրի վերանայման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:

Հաշվի առնելով այն, որ ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերը շրջանառության մեջ են մտել 2013թ.-ի սեպտեմբերից, դեռևս նրանց ամբողջական գնահատում չի իրականացվել, սակայն առկա են ընթացիկ գնահատման և մշտադիտարկման արդյունքներ, որոնք ամրագրված են ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերի արձանագրություններում:

Վերջին հինգ տարիների ընթացքում կրթական ծրագրերի վերանայման շրջանակներում իրականացված տարբեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերանայվել են ուսումնական պլանները, ուսանողների ձեռքբերումների ստուգման և գնահատման ձևերն ու չափանիշները, դասընթացին հատկացված ժամաքանակները, դասընթացների թեմատիկան, կիրառական արվեստի ֆակուլտետում ուսումնառության ձևերը և այլն:

	Ֆակուլտետ/Ամբիոն	Հիմք	Իրականացված փոփոխությունը
1.	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոն	21.03.15թ. արձ. 8	Որոշվել է 2014-15 ուստարվա «Մերվիս» մասնագիտության ուսումնական պլանում վերանայել ընդհանուր մասնագիտական և կամընտրական կրթամասի մոդուլների ժամաքանակները:
2.	Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն	18.04.15թ. արձ. 9	Ուսանողների պրակտիկ գիտելիքները խորացնելու նպատակով որոշվել է 2015-19 ուստարվա «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության ուսումնական պլանի մասնագիտական կրթամասում ավելացնել որոշ մոդուլների գործնական դասընթացների ժամաքանակները, հատկացված կրեդիտները:
3.	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոն	24.02.15թ. արձ. 7	«Տվյալների կառուցվածքներ» առարկայի գնահատման թեստային ձևը փոխարինվել է գրավոր քննությամբ, հաշվի առնելով առարկայի կարևորությունը, այն, որ ուսանողը չի կարող թեստերի միջոցով ինքնուրույն ընտրել խնդրի լուծման ճանապարհը և խնդրի լուծումն իրականացնել ծրագրավորման կառուցվածքների օգնությամբ:
			Ուսանողներին դասընթացի կառուցվածքի և բովանդակության ընկալելի և ընդգրկուն մատուցումը բարելավելու համար “Ալգորիթմների տեսություն” դասընթացի համար կատարվել է թեմատիկ փոփոխություն՝ թեմաների խմբավորման և միջազգային ընդունված տերմինալոգիայի օգտագործմամբ: Նաև ընթացիկ թեստային քննությունը փոխարինվել է գրավոր քննությամբ:
4.	Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոն	30.10.14թ. արձ. 4	Որոշվել է ամբիոնում ունենալ օտար լեզվով դասախոսությունների անցկացման գրաֆիկ և պարբերաբար իրականացնել օտար լեզուներով դասախոսություններ և բաց դասեր:
		30.10.14թ. արձ. 4	Որոշվել է ամբիոնում ունենալ ինքնուրույն աշխատանքների գնահատման կիրառելի կարգ:
		16.02.15թ. արձ. 8	Վերանայել Տնտեսագիտության ֆակուլտետում «Մաթեմատիկական անալիզ», «Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ» դասընթացների առարկայական ծրագրերը, որպեսզի ֆիքսվեն այն խնդիրները, որոնց լուծմանն է միտված առարկայական ծրագրում տրվող տեսական նյութը:
		14.05.15թ. արձ. 11	«Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության 2015-16թթ. ուսումնական և աշխատանքային պլանների կազմում կատարել կրթական երկու մոդուլի փոփոխություն, «Տվյալների հենքեր» առարկան փոխարինվել է «Կադաստրային քարտեզագրում և հաշվառում» առարկայով, «Բնօժենքական երկրաբանություն և գրունտագիտություն» առարկան՝ «Տեղագրական քարտեզագրում», հաշվի առնելով ամբիոնի դասախոս Ս.Դավթյանի առաջարկությունը և ուսումնասիրելով արտասահմանյան բուհերի նույն մասնագիտությունները:

5.	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	27.06.15թ. արձ. 9	Հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը, ուսանողական հարցումների արդյունքները, մասնագիտության պահանջարկը և պրակտիկաների ժամանակ արտաքին շահակիցների կատարած առաջարկությունները որոշվել է ներկայացնել առաջարկ ֆակուլտետում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով ուսումնառություն կազմակերպելու վերաբերյալ:
6.	Հայոց լեզվի և գրականության ամբիոն	12.03.15թ. արձ. 12	Հաշվի առնելով ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, ամբիոնի վարիչն առաջարկել է փոփոխություններ կատարել 2014-18 և 2015-19 ուսումնական պլաններում. -պակասեցնել մի շարք դասընթացների դասախոսությունների քանակը և ավելացնել գործնական, սեմինար դասընթացների ժամաքանակները, - կատարել որոշակի փոփոխություններ կամընտրական դասընթացներում, այնքան, որ դրանք միտված լինեն մագիստրոսական մասնագիտություններ շարունակող ուսանողների համար:
7.	Օտար լեզուների ամբիոն	17.02.15թ. արձ. 8	Հարցումների արդյունքների հիման վրա որոշվել է 2015-19 ուսումնական պլաններում մասնագիտական առարկաների ժամաքանակները 2-րդ և 4-րդ կուրսերում ավելացնել:
8.	Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն	13.04.15թ. արձ. 9	Որոշվել է 2015-19 ուսումնական պլանի մասնագիտական կրթամասում «Հայոց պատմություն-1» դասընթացի 48ժ դաս., 16ժ սեմ. փոխարինել է 64ժ դաս, 32ժ սեմ. և այլն:
9.	Կիրառական արվեստի ֆակուլտետ	26.09.13թ. արձ. 9	Հաշվի առնելով ՄԿՊԿ և ԿՈԱԳ աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները և համապատասխան մասնագիտական բազայի և որակյալ պրոֆեսորադասախոսական կազմի առկայությունը ֆակուլտետի խորհրդում որոշվեց առաջարկել մասնաճյուղի տնօրենությանը ֆակուլտետում 2014-15 ուստարվա համար կազմակերպել «Դիզայն (գեղար)» մասնագիտությամբ ուսումնառություն:
	«Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոն, «Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոն	19.05.15թ. արձ. 11	Առաջարկվել է 2015-16 ուստարվա աշխատանքային ուսումնական պլաններում ավելացնել մասնագիտական դասընթացների ժամաքանակները՝ ոչ մասնագիտականների հաշվին. օրինակ՝ «Գծանկար-1» /4դ, 60գ/ - /6դ, 90գ/ «Գունանկար-2» /8դ, 56գ/ - /6դ, 74 գ/ և այլն
		...	Կիրառական արվեստի ֆակուլտետում դասախոսների առաջարկով ներդրվել է ուսումնառության կազմակերպման պլեներային մեթոդը:

Չափանիշ 3-ի վերաբերյալ ներկայացնենք վերջին 5 տարվա SWOT վերլուծությունը

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. Տարածաշրջանի աշխատաշուկային ՄԿԾ-ների համապատասխանություն: 2. Մշտադիտարկման, վերանայման գործընթացների կանոնակարգի և պլան-ժամանակացույցի առկայություն: 3. Վերանայված ՄԿԾ-ների համադրելիություն որակավորումների ազգային շրջանակի հետ և կառուցվածքային ու բովանդակային համապատասխանություն ԵՊՀ ՄԿԾ-ների մեթոդական ուղենիշներին: 4. Մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի ինստիտուտի ներդրում: 5. ՄԿԾ բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականության առկայություն: 6. Բոլոր մասնագիտությունների համար “Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք”-երի առկայություն և համապատասխանություն ակնկալվող որակավորումներին: 7. Ուսանողների ուսումնական բեռնվածության արտահայտում ECST կրեդիտներով: 8. Կրթական ծրագրերի՝ ակնկալվող վերջնարդյունքների բավարար մակարդակ կրթական հաջորդ աստիճանի ուսուցման համար: 9. ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի առկայություն: 10. Դասընթացների փաթեթների կիրառում: 11. Նպատակային պրակտիկաների կազմակերպում:	1. Համագործացություն ԵՊՀ-ի և առաջատար ՄՈՒՀ-երի հետ: 2. Արտաքին շահակիցների մասնակցություն ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում: 3. ՄԿԾ-ների հրապարկայնություն: 4. Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականության մշակում: 5. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության մշակում: 6. Շրջանավարտներից և պրակտիկանտ ուսանողներից արտաքին շահակիցների բավարարվածության ուսումնասիրություններ: 7. Դասավանդման որակից և արդյունավետությունից, ուսումնառությունից ուսանողների և շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրություններ:

Թույլ կողմեր (Weaknesses)	Վտանգներ (Threats)
1. ՄԿԾ-ների համար բենչմարքինգի իրականացման հստակ ընթացակարգերի բացակայություն: 2. Դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների կիրառման ցածր մակարդակ: 3. Գնահատման համակարգում ուսանողների հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդների անկատարություն: 4. Առաջատար ՄՈՒՀ-երի հետ ուսանողների և դասավանդողների փոխանակման պայմանագրերի բացակայություն: 5. Կրթական ծրագրերի մշակման գործընթացում դասավանդողների իրազեկվածության և մասնակցության ցածր մակարդակ: 6. Գրագոգության դեմ պայքարի արդյունավետ մեթոդների, ակադեմիական ազնվության բավարար մակարդակի ապահովման մեխանիզմների անկատարություն: 7. ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում արտաքին շահակիցների թույլ ներգրավվածություն: 8. ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայություն: 9. ՄԿԾ-ներում կամընտրական դասընթացների չափաբաժնի անբավարարություն, պրակտիկաների պլանավորման ցածր մակարդակ և կրեդիտների քիչ հատկացում: 10. ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ժամանակակից պահանջներին ոչ լիարժեք համապատասխանություն:	1. Որակավորումների սեկտորիալ շրջանակի բացակայություն: 2. Մասնախտության կրթական նոր չափորոշիչների բացակայություն: 3. Դեմոգրաֆիական խնդիրների պատճառով դիմորդների թվի նվազում: 4. Տարածաշրջանում PR նյութերի հրապարակման և տարածման սահմանափակություն: 5. ՄԿԾ-ների իրականացման և բարելավման համար անհրաժեշտ պետական ֆինանսավորման թույլ աջակցություն: 6. Աշխատաշուկայում պահանջարկի փոփոխություններով պայմանավորված ՄԿԾ-ների վերանայման արտաքին շահակիցների թույլ արձագանք:

Ցանկացած ՄՈՒՀ-ի առաքելության իրականացման հիմնական նախապայմանը ՈԱԾ-ի պահանջներին համապատասխան ՄԿԾ-ների առկայությունը, իրականացումը, գնահատումը և բարելավումն է, որի համար մասնաճյուղը նախատեսում է.

- մշակել և ներդնել ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ,
- բարձրացնել ՄԿԾ-ներում կամընտրական դասընթացների չափաբաժնի և պրակտիկաների պլանավորման և իրականացման արդյունավետությունը,
- քայլեր իրականացնել ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու համար,
- մշակել և ներդրել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն,
- բարելավել գնահատման համակարգում ուսանողների հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդները,
- դասավանդողների համար կազմակերպել կրթական ծրագրերի մշակման գործընթացին վերաբերող վերապատրաստումներ,
- կիրարկել գրագոգության դեմ պայքարի նախատեսված մեթոդները, մշակել գրագոգության դեմ պայքարի արդյունավետ մեթոդների, ակադեմիական ազնվության բավարար մակարդակի ապահովման նոր մեխանիզմներ,
- համագործակցել առաջատար ՄՈՒՀ-երի հետ՝ ուսանողների և դասավանդողների փոխանակման նպատակով,
- մշակել և ներդրել արտաքին և ներքին շահակիցների կրթական պահանջմունքների ուսումնասիրման նոր արդյունավետ մեխանիզմներ,
- համակարգել հարցումների արդյունքների մշակումը, ապահովել հարցումների արդյունքների հրապարակայնությունը:

Աղյուսակ 1. ԵՊՀ ԻՄ-ում նոր մասնագիտության և/կամ մասնագիտացման անհրաժեշտություն /ըստ հարցումների/

Թիվ	2011	2013	2014	2015
1	• սոցիալական աշխատանք, • հատուկ մանկավարժություն, • լոգոպեդիա • Սոցիոլոգիա	• մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա	սոցիալական աշխատող	• սոցիալական աշխատանք • հատուկ մանկավարժություն • լոգոպեդիա, • սորդոմանկավարժություն • ներառական կրթության նեղ մասնագետներ, • սոցիալական մանկավարժություն • հոգեբան (ռազմական)
2	տարրական դասարանների ուսուցիչ	տարրական դասարանների ուսուցիչ		տարրական դասարանների ուսուցիչ
3	ռ.լեզու և գրականություն	ռ.լեզու և գրականություն	ռ.լեզու և գրականություն	ռ.լեզու և գրականություն
4		աշխարհագրություն	աշխարհագրություն	աշխարհագրություն
5		• Իրավաբանություն • իրավագիտություն • օրենք և իրավունք • միջազգային հարաբերություններ	• Իրավաբանություն, • իրավագիտություն	• իրավաբանություն • տնտեսագետ-իրավագետ • միջազգային հարաբերություններ,
6		• հաշվապահ-տնտեսագետ		• հանրային կառավարում, • մենեջմենթ • տնտեսագետ-մենեջմենթ
7			• Տեխնիկական կրթությամբ մասնագետներ	• բժշկական կիբերնետիկա
8				• ռազմական ամբիոնի ստեղծում
10				• ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ

Հավելված 3.1.1. Համադրելիությունը Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ-ի) հետ

	ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ /ՈԱՇ/	ԵՊՀ ԻՄ «Տնտեսագիտության տեսություն» ՄԿԾ-ի օրինակով	ԵՊՀ ԻՄ «Հայոց լեզու և գրականություն» ՄԿԾ-ի օրինակով	ԵՊՀ ԻՄ «Կիրառական արվեստ» ՄԿԾ-ի օրինակով
	Գիտելիքներ	Գիտենա՝		
1	Մասնագիտական աշխատանքի կամ ուսման կոնկրետ բնագավառին <u>առնչվող մասնագիտական, տեսական և գործնական խորը գիտելիքներ</u> , որոնք անհրաժեշտ են տեսությունների ու սկզբունքների համընդգրկուն ըմբռնման, դրանց <u>քննադատական գնահատման</u> ու <u>կատարելագործման</u> , տվյալ մասնագիտական ոլորտում առկա դպրոցների, ուսմունքների, գիտաճյուղերի և ուղղությունների մասին <u>իրազեկվածության</u> , դրանց համեմատության և գործնական կիրառության համար:	Ա1. ժամանակակից տնտեսագիտության հիմնական <u>սկզբունքները և հայեցակարգերը</u>, նրա զլոբալ և լոկալ <u>հիմնախնդիրները</u>. Ա2. բարձրագույն մաթեմատիկայի հիմնական <u>գիտելիքները</u>, վիճակագրության և մաթեմատիկական մոդելավորման <u>մեթոդները</u>, ինչպես նաև մասնագիտությանն առնչվող ժամանակակից <u>տեղեկատվական տեխնոլոգիաները</u>. Ա3. ձեռնարկության (միկրո) և ամբողջ տնտեսության (մակրո) մակարդակներում տնտեսագիտական հիմնարար <u>սկզբունքների կիրառությունները</u>. Ա4. տնտեսագիտական հիմնարար <u>գիտելիքներ</u> ֆինանսների, հաշվապահության, մարքեթինգի, բանկային գործի, վիճակագրության, տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման և այլ ասպարեզներում: Ա5. տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման հիմնական <u>սկզբունքները</u>:	Ա1. բանասիրության հիմնական <u>սկզբունքները և հայեցակարգերը</u>, Ա2. ժամանակակից բանասիրության հիմնական <u>սկզբունքները, հայեցակարգերը և հիմնախնդիրները</u>. Ա3. լեզվաբանական և գրականագիտական հիմնական <u>գիտելիքներ</u>, լեզվաբանական և գրականագիտական <u>վերլուծությունների մեթոդները</u>, Ա4. լեզվաբանական և գրականագիտական <u>արդի ուղղությունները</u>, Ա5. լեզվաբանական և գրականագիտական <u>վերլուծությունները</u>, խմբագրական, թարգմանական, մանկավարժական աշխատանք կատարելու հիմնարար <u>սկզբունքները</u>:	Ա1. արվեստի ժամանակակից <u>տեսությունները</u>, դրանց մեկնաբանությունները, կիրառական արվեստների <u>բաղադրամասերը</u>, դրանց ծագումնաբանությունը, տարածվածությունը, գործնական կիրառելիության սահմանները, Ա2. դեկորատիվ կիրառական արվեստների և ժողովրդական արհեստների նմուշներ ստեղծելու և այդ նմուշները վերլուծելու գեղարվեստական <u>մեթոդները</u>, Ա3. ազգային և համաշխարհային մշակութային <u>ժառանգությունը</u>, խորհրդապաշտական ու գաղափարական նշանակություն ունեցող <u>գարդամոտիվների ծագումնաբանությունը, իմաստաբանությունը</u>, Ա4. դեկորատիվ կիրառական արվեստի և ժողովրդական արհեստների մասնավոր և թանգարանային հավաքածուների արժևորման և նրանց գեղարվեստական արժեքի գնահատման <u>մեթոդները</u>, ցուցահանդեսներ, մրցույթներ, փառատոներ կազմակերպելու ժամանակակից <u>մոտեցումները</u>, ծառայությունների շուկայում ստեղծագործական արտադրանքի առաջընթացի հիմնական <u>սկզբունքները</u>, Ա5. մանկավարժական վարպետության և ստեղծագործական հոգեբանության հիմնական <u>սկզբունքները</u>, արվեստի և մշակույթի <u>դասավանդման մեթոդները</u>:
	Հմտություններ	Տիրապետի՝		
2	<u>Վարպետության և նորարարության</u> մասին վկայող <u>առաջանցիկ հմտություններ</u> ,	Բ1. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տնտեսագիտական	Բ1. լեզվական և գրականագիտական փաստերի <u>հավաքման, պահպանման և մշակման</u> մե-	Բ1. շրջապատող իրականությունը, բնությունը, մարդկանց <u>ընկալելու, ըմբռնելու, ուսումնասիրելու</u> և դրանց ամբողջ գե-

	որոնք անհրաժեշտ են աշխատանքի կամ մասնագիտական ուսման որևէ բնագավառում բարդ և անկանխատեսելի խնդիրներ լուծելու, բարդ ու համալիր տեղեկատվությունը քննադատաբար վերլուծելու և գնահատելու, պահանջվող ունակություններն ընտրելու, զարգացնելու և հարմարեցնելու, մասնագիտական գործունեության ընթացքում անհրաժեշտ մեթոդներ գործի դնելու, այդ մեթոդները կատարելագործելու ու դրանց արդյունավետությունը գնահատելու համար: <u>Համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից</u> ազատորեն օգտվելու գործնական հմտություններ, հայտնի ծրագրային փաթեթների գործնական տիրապետում:	տեղեկատվություն <u>հավաքագրելու, վերլուծելու և մեկնաբանելու</u> հմտություններին, F2. տնտեսագիտական ստանդարտ մոդելների հիման վրա <u>Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների</u> և քանակական վերլուծության հիմնարար մեթոդների կիրառմամբ տնտեսական սուբյեկտների վարքը, տնտեսական երևույթների և պրոցեսների հնարավոր զարգացումները <u>կանխատեսելու</u> հմտություններին, F3. ձեռնարկության գործունեությանն առնչվող միկրոտնտեսագիտական ցուցանիշները, ֆինանսական, հաշվապահական. մարքեթինգային և այլ տվյալները <u>հաշվարկելու և մեկնաբանելու</u> հմտություններին, F4. մակրոտնտեսական ցուցանիշները <u>հարշվարկելու և մեկնաբանելու</u>, դրանց <u>համադրումներ կատարելու</u> հմտություններին, F5. ակադեմիական և արդյունաբերական ոլորտներում <u>ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու</u>, ինչպես նաև որոշակի ղեկավարության ներքո <u>հետազոտական աշխատանքներ իրականացնելու</u> հմտություններին:	թողները կիրառելու հմտություններին. F2. լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս <u>Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործելու</u> հմտություններին. F3. լեզվաբանական և գրականագիտական վերլուծություններ <u>իրականացնելու</u> հմտություններին. F4. տարաբնույթ տեքստեր <u>խմբագրելու, սրբագրելու, թարգմանելու</u> հմտություններին. F5. ակադեմիական և մանկավարժական ոլորտներում <u>ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու</u>, ինչպես նաև որոշակի ղեկավարության ներքո <u>հետազոտական աշխատանքներ իրականացնելու</u> հմտություններին:	ղեցկությունը խորությամբ, բազմազանությամբ և գունագեղությամբ <u>վերաբրտադրելու</u> հմտություններին, F2. տարածական մտածելակերպով հարթ մակերեսին ծավալներ <u>կառուցելու</u>, ձեռքով, աչքաչափով՝ առանց որևէ չափադրական գործիքի օգտագործման և <u>Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների</u> կիրառմամբ նախշ, նկար, կոմպոզիցիա <u>ստեղծելու</u> հմտություններին, F3. գունեղ, առողջ, թարմ ու կենդանի գույներով գեղանկարներ, արագ և գեղարվեստական բարձր ճաշակով գորգի, կարպետի, գոբելենի էսքիզներ <u>ստեղծելու</u>, կենցաղում օգտագործվող փայտե իրերի էսքիզներ, կահույքի խմբավորումների նախագծեր <u>կատարելու և նրանց վերլուծելու և գնահատելու</u> հմտություններին, F4. խեցեգործության, քանդակագործության և կերպարվեստի այլ բնագավառներում բացառապես մարդու մարմնի անատոմիական կառուցվածքի իմացության հիման վրա անձնական, անհատական զգացմունքները <u>արտահայտելու</u> հմտություններին, F5. կիրառական արվեստի, գեղարվեստական նախագծման, կատարման տեխնիկայի ժամանակակից մեթոդների կիրառմամբ գեղագիտորեն կատարյալ և բարձրորակ ինքնատիպ նմուշներ <u>ստեղծելու</u> հմտություններին:
	Կարողություններ	Կարողանա՝		
3	<u>Պատասխանատվության ստանձնում</u> աշխատանքի և ուսման այն գործընթացների կազմակերպման ու	Գ1. աշխատել թիմում, Գ2. <u>կիրառել</u> գիտելիքները պրակտի-	Գ1. աշխատել թիմում, Գ2. <u>կիրառել</u> գիտելիքները պրակ-	Գ1. <u>աշխատել</u> թիմում, ցուցաբերել նախաձեռնություն, իր վրա <u>վերցնել</u> մասնագիտական

կառավարման համար, որոնք կարող են հանգեցնել միջավայրի զգալի փոփոխությունների կամ զարգացման. <u>նախաձեռնության ցուցաբերում, որոշումներ կայացնելու</u> ունակության դրսևորում նմանօրինակ գործողությունների իրականացման ընթացքում. աշխատանքի և ուսման գործընթացներում մյուս աշխատողների դերի որոշում. այդ գործընթացների և անհատների ու խմբերի շրջանում արհեստավարժության զարգացման համար պատասխանատվության ստանձնում. <u>ինքնուրույնության դրսևորում</u> աշխատանքի և ուսման ընթացքում. մասնակցություն նյութական պաշարների պլանավորման և բաշխման գործընթացին: <u>Օտար լեզվով</u> կարող է կազմել հստակ տեքստ, մասնագիտական թեմայի շուրջ: Կարող է քննարկել իր մասնագիտության Տեխնիկական մանրամասները, <u>ներկայացնել կարծիք</u> և իր նպատակները:	կայում, <u>ձևակերպել</u> խնդիր և լուծել, Գ3. տարբեր աղբյուրներից <u>հայթայթել</u> տեղեկատվություն և <u>վերլուծել</u>, Գ4. բանավոր և գրավոր <u>հաղորդակցվել</u> մասնագիտական հանրության հետ, Գ5. <u>մայրենի և որևէ օտար լեզվով</u> տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսք, Գ6. պահպանել մասնագիտական <u>էթիկայի նորմերը</u>:	տիկայում, <u>ձևակերպել</u> խնդիրներ և լուծել, Գ3. տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և վերլուծել, Գ4. մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր <u>հաղորդակցվել</u> հանրության հետ, Գ5. <u>մայրենի և որևէ օտար լեզվով</u> տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը, պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը: Գ6. ուսումնասիրության ընթացքում <u>ստեղծել</u> միջառարկայական կապեր:	ողջ պատասխանատվությունը, <u>վարել</u> բանավեճեր, Գ2. ինքնուրույն <u>առաջադրել</u> գեղարվեստատեղծագործական խնդիրներ, նախագծեր, <u>լուծել</u> այդ խնդիրները, նախագծերի պահանջների իրականացման համար <u>կազմել</u> պլաններ, Գ3. ինքնուրույն <u>իրականացնել</u> անհատական ստեղծագործական գործունեություն, արվեստի տարբեր ճյուղերի նվաճումները <u>կիրառել</u> նախագծերում, ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքները, Գ4. ինքնուրույն <u>օգտվել</u> տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, մասնագիտական շփումների միջոցով <u>հավաքագրել</u>, <u>վերլուծել</u> և <u>առաքել</u> տեղեկատվություն, Գ5. արվեստի և մշակույթի մասնագիտական ոլորտի գիտական և կրթական գործընթացներում ազատ <u>հաղորդակցվել</u> <u>օտար լեզվով</u>, <u>կիրառել</u> ժամանակակից գրաֆիկական ծրագրեր և տեղեկատվական տարատեսակ համակարգեր, Գ6. <u>պահպանել</u> մասնագիտական էթիկայի նորմերը:
--	--	--	--

Հավելված 3.1.2. Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների ցանկը

	Մասնագիտության անունը	Այլ բուհեր
1.	Պատմություն	• ՀՀ, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, • ՀՀ, Վանաձորի պետական համալսարան • ՌԴ, Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան • ՌԴ, Տամբովի բպետական համալսարան • ՌԴ, Տվինի պետական համալսարան
2.	Հայոց լեզու և գրականություն	• ՀՀ, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, • ՀՀ, Վանաձորի պետական համալսարան
3.	Մանկավարժություն և հոգեբանություն	• ՌԴ, Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Սևաստոպոլի մասնաճյուղ • ՌԴ, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան (ՄՊՄՀ)
4.	Հոգեբանություն	• ՌԴ, Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան • ՀՀ, Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան • ՌԴ, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան (ՄՊՄՀ) • ՀՀ, Վանաձորի պետական համալսարան
5.	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	• ՀՀ, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան • ՀՀ, Գյումրու մանկավարժական ինստիտուտ • ՀՀ, Վանաձորի պետական համալսարան • ՌԴ, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան
6.	Տնտեսագիտության տեսություն, Տնտեսագիտություն	• ՌԴ, Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան (ՄՊՀ) • ՌԴ, Սանկտ-Պետերբուրգի ինժեներա-տնտեսագիտական համալսարան (ENGECON) • ՌԴ պ/չ (Ռուսաստանի դաշնության պետական չափորոշիչներ) • Անգլիա, Middlesex University (London) • Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա
7.	Սերվիս	• ՌԴ, Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Վոլգոգրադի մասնաճյուղ • ՌԴ, Տագանրոգի Հարավային Ֆեդերալ տեխնոլոգիական ինստիտուտ • ՌԴ, Տուրիսկի և սերվիսի ռուսական պետական համալսարան • ՀՀ, Երևանի Սլավոնական Համալսարան
8.	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	• ՌԴ, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան • ՌԴ, Սամարայի պետական համալսարան
9.	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	• ՌԴ, Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան (ՄՊՀ), • ՌԴ, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան
10.	Բնապահպանություն և բնօգտագործում	• ՌԴ, Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան (ՄՊՀ), • ՀՀ, Հայաստանի Պետական Ագրարային համալսարան/գյուղակադեմիա • ՌԴ, Բարձրագույն կրթության ֆեդերալ պետական կրթական չափորոշիչ • Բարձրագույն մասնագիտական կրթության բակալավրի որակավորման պետական կրթական չափորոշիչ
11.	Էկոլոգիական քիմիա	• ՌԴ, Տյումենի պետական համալսարան • ՌԴ, Խ.Ս.Բերբեկովի անվան Կաբարդինո-Բալկարական պետական համալսարան
12.	Քարտեզագրություն և կադաստրային գործ	• ՌԴ, Բարձրագույն կրթության ֆեդերալ պետական կրթական չափորոշիչ • ՌԴ, Ուսումնական պլան “Землеустройство и кадастры ”
13.	Կիրառական արվեստ	• ՀՀ, Երևանի գեղարվեստի ակադեմիա • ՀՀ, Երևանի պետական մանկավարժական համալսարան, • ՌԴ, Բարձրագույն կրթության ֆեդերալ պետական կրթական չափորոշիչ • ՌԴ, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան

Հավելված 3.1.3. Մասնագիտության կրթական ծրագրի կառուցվածքի համեմատական վերլուծություն

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	Middlesex University (London)	ՀՊՄՀ /Հայկական պետական մանկավարժական համալսարան/	ՌԴ պ/չ
